Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Шиц
377, 378, 383
379, 380, 381, 382

2 000

421
6

# ՆՈՐ ՔՆԱՐ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԵՏՐԱԿ Ե· 5

Ի ՄՈՍԿՈՒԱ

1859.

# ՆՈՐ ՔՆԱՐ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՏԵՏՐԱԿ Ե.

Լiuy
383
Ն-Վ.

# ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

# ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳՉԱՑ

'ի լոյս ընծայեաց

ՈՍԿԱՆ ՏԷՐ-ԳԷՈՐԳԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

ԵՐԵՒԱՆԵՑԻ

---

Ոչ է որ զիմաստութիւն և զխրատ անարգէ՝ թշուառական է. և ընդունայն է յոյս նոցա. վաստակք նոցա անօգուտք. և անպիտանք գործք նոցա:

Գիրք Իմաստութեան Գլ. Գ. համար 11.

---

Ի ՄՈՍԿՈՒԱ

Ի տպարանի Վլատիմիրայ Գոթիէ:

1859.

1578

383-2003

28-382 (6106 9 38)

**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ,**

съ тѣмъ, чтобы по отпечатаніи было представлено въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Санктпетербургъ 28 Января 1857 года.

Ценсоръ *Н. Лажечниковъ.*

# ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅԿԱՑ

ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՑ

## ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՈՒՍՄԱՆՈՂԱՑ

# ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄՈՍԿՈՒԱՅ

Ի յիշատակ

Հայրենի լեզուաւ Թատրոնական հանդիսակա-
տարութեան, որ եղեւ 'ի տան Ազգասէր Միքայէլ
Յարութիւնեան Ստեփաննոսեանց Տփխիսեցւոյ
'ի 27 Յունուարի ամի 1859,

շնորհակալու սրտիւ

Նուիրէ

'ի լոյս ընծայողն։

## ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ա՜խ Հայաստան, Հայաստան,
Ընդէ՞ր կորուսեր տէրըդ.
Եղեր այլոց աղաստան,
Թառամեց վարդ պատկերըդ:

Ո՛չ քեզ պէս բարեպաշտ կար,
Ո՛չ վանքերիդ պէս վանքեր.
Ո՛չ դաշտերիդ պէս դաշտ կար,
Ո՛չ հանքերիդ պէս հանքեր:

Հողըդ պտղաբեր՝ ազնիւ,
Քարերըդ ողջ ակունք են.
Գետերըդ լիքն անթիւ
Կարմրախայտ ձկունք են:

Լերինքըդ ծաղիկ հագած՝
Իբր հարսնացեալ օրիորդ.
Եղջերուքըդ փառակած,
Ի՞նչ չահ, որ չունիս որորդ:

Այդեացդ ամէն մէկն
Իր դրախտ Եդեմական,
Բայց անբաղդութեան տէգն
Խոցեաց լարըդ կենական:

Թո՛ղ՝ Թշնամիք բերկրի՛ն
Մեր աչաց արտասուքով.
Յուսամ՝ երկար չի՛ մնան
Նրանք էլ ուրախ հոգւով:

Աստուած ամենագէտ է,
Անաչառ, արդարադատ.
Անաչառութեամբ դիտէ
Լաւին լաւ տալ, վատին վատ:

Ես եմ Սէյեադի կինն,
Մաղաթեան տոհմի Ոսկին.
Հայրենեաց կաթոգինն,
Հաւատացէ՛ք իմ խօսքին:

18 2/8 58. ՚ի Սեւայոյ ջուրն: Տէրէն Մաթոսեանց*

* Ոսկէ Յովսէփեան անուն: Նա էր բարեպաշտուհի ամուսին Ազգային վարժապետ Սերովբէ Տ. Պետրոսի Տէր-Յովսէփեան Մաթոսեանց, Սէյէդ Մաղաթեանց: Արամէ ըէ Հայաստան շատ ունէնար այսպէս հոգեկան+ հայրենեաց և ուսումնասէրներ պէտքնայ: Ո. Յ.

Յանհարծախօս բան՝ ասացեալ յաւուր Գէորգէ Ճեմա-րանաց Մեծափառ Իշխանայն տոհմին Օրբէլեանց:

Զարթի՛ր զարթի՛ր, ո՛վ դու վերին շնորհօք ուսեալ Նաւապետ,
Տե՛ս զ'ի քէն պայծառացեալ Հայաստան՝ եղեալն անհետ.
Ոմանք մարգարէ զիտեն քեզ, ոմանք զլուխ Նահապետ.
Ի քէն ծնան կայսր, արքայ, իշխան, ազնիւ, վարդապետ.
Արի՛ ընդ իս ելցուք 'ի սուրբ Նորավանից Անապատ[1].
Տե՛ս ո՛վ կայ անդ, աչքն արտասուօք արքայն Հայոց ո՞ւր Սմբատ[2]:
Զարթի՛ր զարթի՛ր 'ի Նիրհմանէ, հիմնադի՛ր Հայաստանի,
Տե՛ս ազգն քո՝ ազգ առաջին՝ այժմ զի՞արդ զատանի:
Որ 'ի Նախնումն 'ի միջի ազանց էր Թանկագին մատանի,
Այժմ իբրև ջախջախեալ Նաւ յալիս ծփեալ տատանի:
Զարթի՛ր զարթի՛ր 'ի քնոյ մեղաց, ո՛վ Հայաստան մարգաւէտ,
Մինչ ցե՞րբ այդպէս անբաղդութեամբ՝ կամիս շրջիլ կիսակէտ:
Շնորհեալ է քեզ բնութեն աւատ, հող, ջուր, անտառ, ազգ և սեւ-
Հա՛ս յօգնութեն Թշուառ ազգիդ՝ կենդանութիւն զայ մինչդեռ:
Զարթի՛ր զարթի՛ր, ո՛վ բարեպաշտ նախահաւատ արքայ մեր,
Քեզ ընծայեաց Աստուածորդին զկենսատուն իւր պատկեր:
Ազգ քո կորոյս զզահ, զԹագ, այժըմ անկեալ կայ անտէր.
Ո՞չ յոյս ունի և ո՛չ զօրեալն 'ի վերուստ անկեղծ սէր:
Զարթի՛ր զարթի՛ր, ո՛վ զաւամեալ Լուսաւորիչ Գրիգորէ,
Զարթի՛ր և տե՛ս՝ քո ազատած ազգիդ օրն ի՞նչ օր է:
Զարթի՛ր, քո անխիղճ Հայերիդ 'ի տէր միմեանց յորդորէ'.
Զի հայր զորդին Թողեալ փախեաւ, քոյրն զզուեաց յեղբօրէ:
Որդիքն քո յայժմեան դարու միայն լոկ անուամբ են Հայ:
Թէ մեք Նրանց եմք ապաստան, վա՛յ մեզ հազար անգամ վա՛յ:
Մեր սուրբ նախնեաց փառաց մասին Նոքա եւս են երկբայ:
Աչեաւ, Նրանց ի՞նչ փոյթ է այդ, միմիայն լինի ղաֆայ՝ չայ:

Սէյէադ:

---

1 և 2. Ս. Նշանայն վանաց վերջաւորին հրհնեա՛ պայտանէն տաղս:

## Հանգոյն «Ասումես՝ դիմացի՛ր» հանգուցեալ Աշըար Ադամայ երգոյն:

1

Ակնարկեա՛, ո՛վ սիրուհի, ակնարկեա՛ տկարիս,
օգնեա՛ սիրահարիս.
Մերթ իմ նեղութեանս հասու լե՛ր, մերթ դեղ ու ճարիս՝
տո՛ւր անմխիթարիս.
Անբաղդութեանս ձեռքիցը ողորմելի եմ շատ,
երբեմն էլ յուսահատ.
Ափսո՜ս, հազար ափսո՜ս. ապա՛ վա՜յ ինձ խեղճագարիս,
պանդուխտ և օտարիս:

2

Մինչ ե՞րբ աղաղակս չ՚լսելով՝ մնամ այսպէս,
հայցեմ խնամ այսպէս.
Թէև քո արարքդ, իրաւի, շատ չէ՛ յիմարիս,
ամօթ բարեկարիս.
Սիրայդ աղեղն իմ վերայ լարուած կայ յարաժամ,
սպանուած եմ անդամ.
Արեան ծարաւի սէրդ է աչարկու խոնարհիս,
Ներհակ կայ աւարիս:

3

Որքա՛ն պարելով ձայնեցի անդութ սիրականիս,
այն ինչ հոգեհանիս.
Իսկ նա Սաւուղազգեաց չի նայող թութակ շուարիս,
տաւնաղեայ քնարիս.
Ես համահաւասար հիմա որդւոյն Պենելոպեայ,
ինձ սէրը Կալիպսեայ
Թէ՛ որքա՛ն էր անթիւ, հիմա պատմեմ նաւավարիս,
նա վա՜յ կրկնէ չարիս:

4

Ես իմ ժամանակիս գումարն բաշխեցի սիրոյդ,
գլուխ եդի անփոյթ.
Իւ այսուհետև ի՞նչ է պակաս մահուան յօժարիս,
բախտով ապիկարիս.
Նոքան բողոքը իմ սիրելւոյս կարդացի ես ողջ,
ականջ գլուխ ամբողջ,
Ասաւ. Շիրին, դու պէտք է սիրոյս մէջ չի՛ դադարիս,
մինչ ինձ հաւատարիս։

18 13/3 56.　　ՄՈՒՐԴ ՇԻՐԻՆ.

## Հանգոյն «Մասումես՝ դիմացիր» հանգուցել Մաշէտր Մաքոնոյ Երգոյն։

1

Երբ որ լսում եմ անոյշ բառդ՝ քաղցր աւաւօտեան,
անձնս է կլում տանջան.
Լեր ողորմածիր՝ բարեխնամ, թէ դու ես Լօկման,
ինձ այս ցաւերէն հան.
Ես տրտասուելով՝ խառնակուել է աչքերս յարեան,
ինձնում չի՛ մնաց ջան։

2

Արժանի արա ինձ քո տեսոյդ, լեր բարեխնամ,
՚ի սպասուդ միշտ կամ.
Այս չարչարանքը ինձ տալիս ես, տես, քանի՞ անուամ,
ուղուեմ հոգի տամ.
Աղաչ մի՛ լինիր, չես կշտանալ՝ աշխարհը քեզ տան,
ինձ խղճա, սիրական։

3

Այս չարչարանքը ինձ տալիս ես՝ մի տեսնեմ ինչո՞ւ,
ողորմ չի՞ ունես դու·
Ես արտասվումեմ տիւ և գիշեր, վասն է՞ր՝ սիրտդ քու,
ես չեմ տեսում աչու·
Խղճա՛ սիրելուդ՝ մի՛ չարչարիլ, ո՜վ իմ սիրական,
տեսոյդ լինիմ արժան·

4

Ես մեռեալ էի՝ կենդանացայ՝ ինձ եկար ուստ,
փրկի՛ր՝ մի՛ անիլ ղասա·
Քեզ կ'ծառայեմ՝ քանի՛ ողջ եմ, ինձ պահի՛ր նուաստ,
սէրդ գլիս այրումէ սաստ·
Թէ սպանումես՝ մի՛ չարչարիլ, տո՛ւր՝ շուտով սպան,
ձեռովդ դի՛ր 'գերեզման։

5

Գիշեր ու ցերեկ ես քաշումեմ քո ա՛հ ու զարը,
վերջն ի՞նչ է իմ ճարը·
Իլի քեզանում կ'գանուի ցաւիս հնարը,
ե՛կ՝ իմ սիրահարը·
Ձայնիդ կարօտ եմ, խօսացնելիս՝ տո՛ւր ինձ պատասխան,
ինձ լինի բաւական։

6

Այս չարչարանքը քաշումեմ՝ կարօտ եմ սէրի,
քեզ դառել եմ գերի·
Քո ողորմութիւնդ ինձ վերայ որ լինի թերի,
սիրտս կու համբերի·
Արա՛ բարութիւն, վերջիդ օրն ունենաս նշան,
լինի յիշելիք բան։

7

Ինձ պէս ցաւատար ո՛չ ոք չ'կայ այս աշխարհումը,
տուիր այս տարումը·

'Բա քո ձեռիցը դանդատ անեմ՝ գնամ, եա՛ր, ո՞ւմը,
մի՛շտ լինիս բարումը.
Այս Գիւրջի Նաւէն ո՛չ ոք չունի տէր՝ քեզնից գլւման,
սիրտս է կապել դուման։

Գիւրջի-՚Նաւէ։

## Նոր սիրականն։

Քաղցր ձայն ունի իմ սիրականին,
Երթէ որ լսեմ, մատաղ եմ ջանին,
Բոլոր աշխարհն քեզ դիփ հաւան'ին,
Ուզումեմ՝ մի խօսք ասեմ քոյ նանին,
Վախումեմ՝ յայտնի երկրի Խանին,
Ո՞նց ղիմիշ կանի ինձպէս ջիւանին։
Անուշ խօսքն լսելքս տանումայ,
Աչքն աղնիւ ա, ինքն խանում ա,
Էն պատկերը որ յանկարծ բանումայ,
Աչքով յօնքովը հոգիս հանումայ,
Էրնակ իմ սրտիս՝ որ դիմանումայ,
Էսպէս դատաստան նա ինձ անումայ,
Աստուած էլ անի իրանց խիղանին։
Ո՛վ իմ սիրելի, ի՞նչ ա քո կամդ,
Հրաման արա՛, պահիլ մի՛ ղամդ,
Ես ծառայութեամբ կ'քաշեմ չամդ,
Արի՛, բաժանենք տասներկու ժամդ,
Ինքդ պաղչաքար ես, քաղցրն ա համդ,
Ինձ տո՛ւր պահեմ քո ջուխտակ շամամդ,
Հաւատալ չի՛ կայ աշխարհի բանականին։
Դիփ հաղնըլումես ջամալդ դուլ խաս,
Քո կէյիմդ ա Թաւլանի լիբաս,
Արդար ձեռնովդ տո՛ւր խմեմ մին Թաս,
Ի՞նչ կուլի մի հետ մեր տունն գաս,

Խալիդ վրիցն չորս հատ պաչ տաս,
Աստուած կու սիրես ես էլայ անմաս,
Հուտով ծրծերդ դի՛ր իմ բերանին։
Տօն օրերն հագնըւումես ալ,
Բարակ մէջքիդ կապումես Թիրմա շալ,
Արծաթէ մաշիկ ունիս, ոսկէ նալլ,
Մէհր ես դուրս եկել, գալիս ես ման գալ,
Ո՛վ որ տեսնումէ՝ չի՛ ունենում հալ,
Կարմիր երես և գօհարից խալ,
Էլ խօսք չունի մեր գովականին։
Վրէդ սարքել ես զինեաթ՝ բախտը
Թէ թագաւոր ես, լի՛ ի՛լ քո թախտը,
Կուզեմ մօտդ գալ, ինձ տա՛ վախտը,
Արի՛, մի՛ կոտրիլ դուն իմ շնախտը,
Էրնեկ նրան ինչ կու բացվի բախտը,
Կունիցը բունի՝ քաշի դրախտը
Էս Միսկին Բուրջուն դուն դատաստանին։

Մ՛ԻՍԿԻՆ-Բ՛ՈՒՐՋԻ։

## ՆՈՅՆ ՍԻՐԱԿԱՆԻՆ։

Ինձ վատութիւն արի՛, մատաղ, մի՛ անիլ,
Ջանս քեզի կուրբան՝ սադաղ մի՛ անիլ,
Մի փուչ բանով ինձ բիդամաղ մի՛ անիլ,
Արտասուքս վարար բուլաղ մի՛ անիլ,
Աստուած սիրես՝ խոց սիրտս դաղ մի՛ անիլ,
Դարդ ու դումաններս օյաղ մի՛ անիլ։
Քո ճամփումըդ ջիւան օմրըս փուչ արի,
Կու խնդրեմ Աստուածանէ՝ տայ քեզ միշտ բարի,
Մուրվաթ արա՛, կանգնի՛ շարթ ու իկրարի՛,
Ինչ որ ասեմ, խօսքս լսի՛, կատարի,
Ձէ՛ մի՛ ասիլ, ունքերդ թաղ մի՛ անիլ։

Ի՞նչպէս անեմ, ո՞ւմ ասեմ դարդ ու սարս,
Օր բէ օր աւելնումէ ահ ու ղարս,
Մ՝ խկրտումէ, ե՛ւ է գալիս ջիկեարս,
Էշխիդ սիրով ճըղճըղել ես խուբարս,
Աստուած սիրես՝ մըհլամ դի՛ր, աղ մի՛ անիր:

Եւրոպացւոց թագաւորն ես դու չքեղ,
ՙՆոր զարդարուած թախտիդ վերայ փառահեղ,
Դահլիճներդ կանգնացրու դու ահեղ,
Թէ սուչ չունեմ, անմեղ դութսաղ մի՛ անիր:

Լաց ու արտասուքս դետոյ նման ա,
Թուրինջի պէս հէր մարդ դժուար դիմանոյ,
Ո՛վ ընկելայ, ո՛վ քաշելայ, կիմանայ,
Դ,ա քեզ կասի, էշխի հետ հաղ մի՛ անիր:

Թուրէնջ:

## Լոփ:

Փող եմ տուել՝ տուն չի՛ գալիս չալ էծն 1,
Խօսացնումեմ էլ, չի՛ խօսում լալ էծն 2:

Ա՜յ հազարաթ, էլ ինձ չի՛ էլաւ մալ էծն,
Իմ գլխիս բերեց մեծ ղալմաղալ էծն.
Կօշա հանդին խիստ լաւ կասեց կալ էծն,
Ինձնից չուզեց կամ ու մալ՝ էծն:

Մարդ էլ փողը կ՚տա՞յ էս թավուր մալի,
Ընկերս նստելայ ճամբումն՝ լալի,
Ի՛նչ անումեմ՝ չեմ անում, տուն չի՛ գալի,
Չե՛մ գիտում՝ ի՞նչ է արել խիալ էծն:

Առաւօտէնց հէնց թարս անկաւ իմ բանըս,
Գիլանոցն նասիբ էր անում ջանըս.

1 և 2. Ս. Ձեռնայն տանց վերջոււմն հրհնեա՛ [illegible] տողս:

Ախ· ա՜նց թէ անտէր մնաց խիղճնըս,
Գլխին էլաւ պատուհաս մալ էծն։
Ինչ փխուլիկով հասցրեցինք Աղնատուն,
Երիշ արեց, ընտեղ սրտիս էլաւ սիւն,
Երևաց Գրամիէն, ասի, հասանք տուն,
Ոտմաշ էլաւ, ինձնից ուղեց նալը էծն։
Ինձի չի՛ ունեմ՛ անեղեցն՝ նետիցն,
Հատ եմ ծեծել, հարցրեցէք փէտիցն,
Ի՞նչ որ արի, անց չի՛ կացաւ գետիցն,
Ինձնից ուղեց գէմի-խնան սալ էծն։
Հատ ածեցի, լաղլաթ չի՛ տուայ սաղեցը,
Զալ չալթույով կապել տուխ պօղեցը,
Սուր մկրատով՝ որ խուզեցի մազեցը,
Հարա՜յ կանչեց, արեց ղալմաղալ էծն։
Ախ· ղարար կանենք, տանք էլ ղասաբի,
Ուստա եկանք ղադ ու ղամի արբաբի,
Մեր տղերքը հասան փողի հիսաբի,
Բուկդ կապենք կանաչ, կարմիր, ալ էծն։
Դականակով չըւել դեղը բըրթեցինք,
Տարանք՝ դարվազի դրանը մորթեցինք,
Զորս օքմինով անջաղ սրան քերթեցինք,
Կասես ընէր մէկ դավա ու քեալ էծն։
Օբումը սրան մի ուրիշ տեղ ունէր,
Գետն անց կենալիս խիստ սիրուն լեղ ունէր,
Քարով կչխուքով հինգ լիտր եղ ունէր,
Իրանու գեօրայ ունէր ահվալ էծն։
Որ մորթեցինք, տոտիխ քանդեց հողը,
Օգնողներին բաշխեցի երկու կողը,
Փաշմանեցի, յետ դառայ՝ տուայ փողը,
Հիսաբ արի, էլ արեց ղարար էծն։
Մի քիչ ունէր էլ կաղ իծին մուրուքվաթ,
Ես չէմ տեսել հալ իծի պէս բիմուրուքվաթ,

Նստոնց համար Աջամն արեց Թարիֆաթ,
Գըլխիս էլաւ պատուհաս՝ ամալ էծն։

Աշըքար Նաղաշ։

## Սան սիրոյ։

Բաղչի դուռն է բացուել 'մէջ քո դըրախտին,
Մայիլ եմ աչքերիդ անդլին ալմաստին,
Ես էլ մէկ տաղ ասեմ 'վերայ քո Թասին.
Ես եղէ քեզ հէյրան, դու՝ մարալ ու Ջէյրան 1։
Նոր ծաղկեցաւ այգին, եկեալ է գարուն,
Է՞ր իմ սիրտս կանես եարալու արուն.
Դու ես իմ սիրելի աղա և պարոն։
Ես գիտեմ, որ դու ինձ սիրոյ Թամահ ես,
Ցիծերդ հող կու դառնայ, է՞ր պինդ կու պահես,
Ես գրկեմ՝ համբուրեմ, հոգւով ղարդարուես։
Այլ չունիմ սիրելի քան զքեզ պատուական,
Չիս մի կարօտ Թողուր, նազլու սիրական,
Ես սիրոյդ մեռանիմ, դու ինձ մնաս պարտական։
Երեսդ կու նմանի կարմրափայլ վարդին,
Թո՛ղ՝ քո մարդն մեռանի, մնայ քո որդին,
Բալքեամ ռահմ անես ղարիբ Ճամբորդին։
. . . . . .

## Ի վերայ աւերման Տփխիս քաղաքի գալստեամբ Աղայ Մահմետ Խանին։

Ինչայ ու հարցիդ չ'գայ էն Թաւուր զարման քաղաքիս,
Հարիւր հազար մարդով եկաւ նա էս Գիւրջիստան քաղաքիս։

---

1. Աժնոյն տանց վերջաւոր հրհնէմ ղայր փող։

Պարսից մի անիծեալ լոյս ընկաւ դուշման քաղաքիս,
Մամմադ Խան՝ եկաւ տուաւ մի նիզամներ էս քաղաքիս,
Եսիր անող, կրակ տուող՝ չէր մէ ղարման քաղաքիս,
Հարիւր հազար մարդով եկաւ, չի՛ կարաց առնել քաղաքիս։
Մելիք Մէջլումն չուն դառնայ, Ջաւաթ Խանն պատի կուչի,
Քաղաքն վիրանա արին, տեղի չինեցին Բայկուշի,
Մելիք Մէջլումի ազգէմէն մէկ չուն էլ չի՛ հաչի 'Շուշի,
Թանգ ղօշուն 'ինք մոտ արել Խնասուր, Զարեաք, Թուշի,
Աջէյիւ չալէշ կուդ'ին, կու լին'ին միղան քաղաքիս։
Ախտա Խանի դալն իմացանք, մենք ասում'ինք՝ Շահ եկաւ,
Թէ չէ քաղաքն քանդելոյ տասն հազար Թի ու բաշ եկաւ,
Բերդեցիք ասումէին. մեզ համար կրբլէզդեաց եկաւ,
Նորա ատն չա՛ր նշան էր, ազալ սա՛լ իժում մահ եկաւ,
Մնացողն ղադում արին, ընկաւ բարեբան քաղաքիս։
Քաղքեմէն տարած եսիրն ո՛րն Արաբիստան է հասի,
Ո՛րն Շաքի, ո՛րն Շիրվան, ո՛րն Դաղիստան է հասի,
Ո՛րն Ղուբա, ո՛րն Բաքի, ո՛րն Դարբանդ է հասի,
Ո՛րն Թավրիզ, ո՛րն Թեհրան, ո՛րն Խօրասան է հասի,
Նրանց նաչար հէրն ու մէրն ո՞ր մինն վա՛յ տան քաղաքիս։
Քաղքի Ճոկած տղէքներ'ին, որ դասերով ման կուգէին,
Մէկ մէկու ղարդաշ կ'օսէին, տե՛ս ինչ սիրով ման կուգէին,
Ո՛վ որ կարողութիւն ունէր՝ նոքարներով ման կուգէին,
Քեթխուդա՝ Աղա մարդիկն չախչուրներով ման կուգէին,
Նրանցմէն մէկն է՛լ չեմ տեսնում հիմի մէ նշան քաղաքիս։
Քաղաքն որ նեքսւ եկաւ հարիւր հազար Ղըզըլբաշն,
Մէկ մէկուց այիրիլմիշ արին, դիփ մէտի, ղովում՝ ղարդաշն,
Քաշանէքը չունին էր ուտում, ո՛չ մինն չ'մտաւ նաշն,
Գետի պէս արիւն էր գնում, բօսթան էր Ադմօրդուայ լաշն,
Որդին մօրից 'ին իլում, է՛լ սուդ ու շիւան քաղաքիս։
Հազար երկու հարիւր քառասուն ու չորս Թուին ընկաւ դերի,
Վարդապետներ կոտորեցին, լէշ էր ածած տէրտէրի,
Աղրանք ու մալ ու դովլաթ 'ին տարել, Թաք տներն չէին էրի,

Քաղաքն աւերվէլոյ օրն տասն ու մէկն էր Սեպտեմբերի,
Քրօնիկօնումն նստած էր Ռ—ն ու Պ—րն ու Գ—ն քաղաքին:
Ես մի տան ղուլ իմացայ, հէնց գիտացի հէրըս տարան,
Մէրս ձեռնեմէս խլեցին, ջուխտ քոյր ու աղբէրս տարան,
Հօրս Թըրով սպանեցին, եսիր արին մէրս՝ տարան,
Շամչի Մելքօն շատ լաց էլաւ, ասաւ՝ որդիս ձեռէս տարան,
Վեց Կըզըլբաշ սպանեցի, մին էլ մէ մեծ խան քաղաքին:

Շամչի-Մելքօ:

## Լուջինաջէն:

Էջմիածին խիստ գովական զանազան,
Ծառայ եմ՝ քո սուրբ Աթոռիդ, Սրբազան:
Մի հէնց պայծառ կու փայլի, նման է արեգական,
Չորս կողմն լաջիվարդ քաշած, կու երևայ զարմանազան,
Աջիդ ունես լա՛լ ու եագութ, ալմաստեթիրաշ սուրբ զաւազան:
Գիշերահանց քաղցր ձայն կու տայ, կու բացուի դրախտի դուռն,
Միջին բազմացրած է Լուսաւորչու աջոյ կուռն,
Ոսկէ ղալամով քաշած է դուլիսթանի վարդն ու սումբուլն,
Վրէն շուռ կ'գայ ճչալով քաղցրաձայնիկ բուլբուլն,
Ոսկէ մարմար սուրբ սեղանն խիստ գովական զանազան:
Կոյս մայրն մեր Աստուածածին չ'կայ նման իրան հասն,
Բարձր զանգակատանն կախ տուած ունի սահաթն,
Ձախակողմն Գայիանէն ա, աջակողմն Շողակաթն,
Ջուրը հայրն մեր Լուսաւորիչ չարչարելոյ սուրբ Տրդատն,
Կոյս մայրն մեր Հռիփսիմէն խիստ գովական զանազան:
Ջուխտ սարկաւագ շուրջ կգան, ու սեղանին գլուխ տալով,
Միաբանքն զարդարուած խաչ ու խաչվառով, շուրջառով,
Ես անարժան Ղաղարս մայիլ էլայ՝ մտիկ տալով,
Ո՛վ ոք որ զիս կու յիշէ, արժանանայ դրախտին բարով.
Եփրեմ սուրբ կաթուղիկոս խիստ գովական զանազան:

Ղաղար:

## Ի վերայ Մահ լալոյ, որ 'ի Տփխիս։

Տեսէք, ի՞նչ բարկութիւն է Աստուածանից կամով քաղաքիս,
Ուղիղ սրտով խնդրեցէք, կու փրկէ ղամով քաղաքիս,
Զանազան հպարտութիւնն յայտնի է բանով քաղաքիս,
Մեղքն վարձքին յաղթել է մէ զօրեղ ջանով քաղաքիս,
Չորս կողմն Թաթօր տալով՝ քօմակ է ղամով քաղաքիս։

Կենդանիք, դուք դարձ եկէք, յանկարծակի մահն իմացէք,
Զարմանք է քաղ'քի բանն, սարսափելի ցաւն իմացէք,
Պատիժ է մեր մեղացն, ես Նախանդի շահն իմացէք,
Ընկօտրում պաս ուտողներ, Աստուածեմէն մահն իմացէք,
Պետական եկեղեցիքն կողպած է ժամով քաղաքիս։

Նշանով քաղ'քի մէջն ես ի՞նչ Թաւուր բան է գալի,
Կրակն երկնքեմէն անց մէ խնամն բ'ջամ է գալի,
Մարդոյ սէրն հատել է, մեր միջումն մահ է գալի,
Բարեխօս Աստուածածնի ջուխտ աչքեմէն նամ է գալի,
Մասունքներին համբուրեցէք ռանգ ռանգ ղամով քաղաքիս։

Մխաբան անհաշբեարով դառն ու ոչխար մատաղ արէք,
Բերումեն սուրբ Գէորգը, գլուխներդ սադաղ արէք,
Կու փրկէ օրհնած ջուրն, մասունքներն Թաթախ արէք,
Փէյանդաղ խալխչէքն Հինդու եկած մօտ արէք,
Հէնց մնումէ օրինակը դրուստ է միզան քաղաքիս։

Աղքատներ, դուք մօտ եկէք, Աստուածեմէն սէր ուզեցէք,
Փառք տուէք, աղօթք արէք, քաղ'քի համար խէյր ուզեցէք,
Մեռնողներուն հիսաբ չ'կայ, կենդանիներուն տէր ուզեցէք,
Քուր ու աղբեր հաւատացէք, հալալ սրտով մէր ուզեցէք,
Ո՞ւր է էն ղոլղ ու սաֆէն, էլ չ'կայ դամով քաղաքիս։

Թուէլէթու Ղաշնաբաթն մօտ գնացէք, օբա արէք,
Վալթաններըցն աւարայ՝ փօթուլներին օբա արէք,
Մեզ համար լաւ խրատ է, վատ բաներն Թօվբա արէք,
Սիրեցէք Աստուծոյ Խամբէն, մէկս մէկանց մատայ արէք,
Ջան տացէք, ջան լսեցէք, մէկ մէկու կամով քաղաքիս։

3823-2003 (6106/98)
ССРА

Նաչարա ղարիբ տեղն դարդիս համար հաղ եմ ասում,
Չեմ գիտում՝ ո՞վ է մեռել, ո՞վ կենդանի՝ սաղ եմ ասում,
Մոլորած քաղ՚քի բանն սրտիս մէջն դաղ եմ ասում,
Կարօտ եմ ճամբորդեմէն մնց մէ խաբար սաղ եմ ասում,
Քիչեկ Օղլանը ազատես քեաշքի էս գամով քաղաքիս։

Քիչէկ-Օղլան։

## Սահակ և Մեսրովբ։

Թարգմանեց կանոններով Հայոց համար զօրաւոր,
Տեսութեանդ կարօտ եմ, չամս ու ղամար զօրաւոր,
Հրամայեց զօրքերին՝ կալեն սամար զօրաւոր,
Բղխումէ լոյսն ՚ի բերնէն ձմեռ՝ ամառ զօրաւոր։

Հայոց Հայրապետն, սուրբ Մեսրովբ, Թարգմանիչ է,
Որ Հայկական տառերի միակ հնարիչ է,
Յարևելից յարևմուտ ամէնին պահպանիչ է,
Վահան իշխանն է զինուոր, էն էլ մէկ սահմանիչ է,
Քառասուն կանգուն հեռի, ասեց, վէմ առ զօրաւոր։

Երեք Թագաւոր եկան, ամէնն մէկ կերպարան,
Մէկ մատն մասունք տուին, երկրէ ցերկիր տարան,
Որ Մըշու հրամայեց Օշական հանգստարան,
Եօթն կանգուն լեռ քարից կտրեցին, արին խորան,
Կապեցին գերեզման լուսին համար զօրաւոր։

Եօթն ղարար Թագաւոր ասկէրովն սուր եկաւ,
Չէր լինում հիսաբ քաշիլ՝ հարիւր հազար բիւր եկաւ,
Մէկ խաչով խաչակնքեց՝ դիփ ամէնն կոյր եկաւ,
Ջուրայ տոն դիպաւ, լեռ քարից աղբիւր եկաւ,
Մէկ ծառն նշան ասեց . . . . առ զօրաւոր։

Հոգին մեծ ու փոքրի ամէնն լուր բարուին,
Դատաստանին ի՞նչ կասեմ, ճար չ՚կայ իմ ճարումն,
Թուին հազար ութ հարիւր քառասուն և չորս տարումն,

Ջերդեր Օղլի Սէյեադն չի՛ մնալ աշխարհումն,
Որ գնումես առ Աստուած, հոգւոյս մէկ ճար զօրաւոր:

Սէյէադ՝ Ջէրդէր Օղլու:

## Աքլորն ծնաւ զԱքլոր·

### Ի հանդէպ «Ախ, Յովհաննէս վարդապետ, ինչ անեմ ձեր աքլորին» Աշըղ Շէրէնի տաղերուն:

Նստիր, Շիրին, ասեմ քեզ· մէկ օր՝ մեր տան Թարքումը
Մէկ այմաւուրք ճարեցի՝ հին գրքերի կարգումը,
Էս պատմութիւնս կարդացի աքլորների վարքումը,
Ծափ զարկի, ծիծաղեցայ, զարմանք մնացի աքլորին·
Բայց ինձ հաւատա, Շիրին, բովանդակ մէջ աշխարհին [1]
Բաց յԱստուծոյ՝ մարդ չ՚ինէ աքլորի ծնած տարին[2]:
Ադամ երբ որ ստեղծաւ, սա տասնուհինգ տարուան էր,
Նոյըն երբ տապան մտաւ, սա փղից մեծ հայվան էր,
Աշտարակի շինութեանն հազար ու նարդեւան էր,
Մովսէս գրեց, հաստատեց թիւ ու տարի աքլորին:
Յիսուն տարին մէկ անգամ՝ նստած տեղէն կ՚խաղար,
Կուկլուկու կանչած ամէն երկինք՝ գետին կ՚դողար,
Ովկիանոս ծովի մէջ ծընկներէն ցած կ՚լողար,
Ահագին էր տեսութիւնն զարհուրելի աքլորին:
Տեսքն սիրուն, գեղեցիկ, ոսկեթել ղումաշի պէս,
Փառք ու պատիւն աւելի՝ Մօրր նստած Փաշի պէս,
Պոչումը կար գերաններ՝ Սօղանլուղ մէշի պէս,
Բոլոր ղազանք՝ անասունք էին գերի աքլորին:
Աւուր մէկը չափեցի կանգնած տեղէն դար ՚ի վեր,
Ոտէն մինչև կատարը երեք վերստէն աւել էր,
Քըձէճ ըրած ատենը սարեր՝ ձորեր կ՚աւերէր,

1 և 2. Աշըղին տանց վերջումն հրհնեա՛ պատասխանէ տողը:

Խելք չէր հանի հաստատափոր՝ խոր ծերունի աքլորին։
Աքլորին գլխի վերայ քիրաջ ու քար հանեցին,
Տան տարի բանեցան՝ հազիւ մէկ բերդ շինեցին,
Կակարթի քարթերուն մեծկակ թօփեր հանեցին,
Վա՛յ կու գար էն բերդին, որ չէր խոնարհիլ աքլորին։
Փորումը՝ թէ լցուէին, մեծ քեարվանն էր Խանի պէս,
Կլխէն շատը մնումէր խարաբա վերանի պէս,
Ոտների հաստութիւնն էր ձիթհանքի գերանի պէս,
Ամէն բանն էր կարգէ դուրս այս անձունի աքլորին։
Աշխարհս երբ որ բաժանեց մեծ Թագաւորն Վաղարշ,
Աքլորս առաւ՝ գլխով վանքին էլաւ բաժինն՝ մաս,
Էջմիածնայ ամբարից, Աստուծոյ օր, ճաշէ ճաշ
Կուտ կուտային ութ սօմար խաշած դարի աքլորին։
Երբ որ ինձ նոր վարդապետ, տարան, ձեռնադրեցին,
Գիր՝ կտակով միաբանք աքլորս ինձ յանձնեցին,
Երբ Մկրտիչ վարդապետը Տնտեսապետ կարգեցին,
Շատ ժլատ էր, վա՛յ եկաւ ծեր խղճալի աքլորին։
Աքլորս այսպէս քչակեր քանի մ'տարի ապրեցաւ,
Ամսէն աւել թեւ կախած՝ կուտ ու ջրէն կտրեցաւ,
Յանկարծ այս առաւօտուս չուռտեցաւ՝ սատկեցաւ,
Քիչ մնաց՝ որ առէի, Տէրն ողորմի աքլորին։
Շուտով մեր ոսպատուրք հարիւր մշակ բռնեցին,
Ամէնքն առան մէկ մէկ ութ փրթանոց սուր կացին,
Մինչև հիմա հազիւ թէ յատակեցին՝ ջարդեցին,
Կըշռեցին, հազար փութ եկաւ կաշին աքլորին։
Բժիշկներն ինձ ասացին. աքլորէն ով որ ուտէ,
Համ ծերութեան, համ ցաւի ամէն կերպով օգուտ է,
Մէտք արի յիմարի պէս, թէ չ'անեմ՝ ինձ ամօթ է,
Կանչեցի միաբանից անփորձ ճաշի աքլորին։
Առաւօտէն մէկ մշակ ձեռքը սուր սաթր մ'առաւ,
Աքլորէս մէկ հօխա միս ծեծելով հազիւն էլաւ,
Պէտք էր՝ որ քուֆթա ըլնէր, վերջը չոր կաշի դառաւ,

՚Բարկութենէս քիչ մնաց՝ որ թքէի աքլորին։
Վանքի աշչուն ասացի. եաշնուցը լաւ մի հանէ.
Ասաց. էն լաւ կտորը խիստ թթուած ու տըտհամ է.
Իս էլ կացին չի՛ կտրէ, ակռայ ե՞րբ կարնայ ծամէ,
Վախտին ուրիշ մի ճարէ, յոյս մի՛ անի աքլորին։
Յոյս կտրած աքլորից՝ ուխտր ու դաւ մորթեցի,
Բովանդակ միաբանից ճաշ տուեցի, ճամբեցի,
Դարձայ՝ տխուր Նստեցայ, չատ բարակ մտածեցի,
Թէ աշխարհումս կա՞յ արդեօք մարդ արժանի աքլորին։
Միտքս ընկաւ, որ ես քեզ դաւ խոստացել եմ, Հի՛րին,
Արի՛, դաւի փոխարէն հաճոյ եղի՛ր աքլորին,
Կաշին տա՛ր դաբաղներին, պօլօճիկն աթտարին,
Միսը ծախէ սապօնչոց, հախէն արի՛ աքլորին։

Ռ. Մ. Ռ. Ջօյ-Կօռօլէէֆ։

## Էջմիածին։

Գիշեր՝ ցերեկ խասրաթը կու քաշեմ,
Նասիբ ըլի՝ տեսնամ սուրբ Էջմիածին,
Քո խասրաթէն կու լամ՝ արտասունք կու թափեմ,
Նասիբ ըլի՝ տեսնամ սուրբ Էջմիածին։
Օխտը քեաշվան ունի, չորս դէխը սար ի,
Իրեք գիւմբազ ունի, գէյդուրմա քար ի,
Վա՛մ որ զՄա կու կանչի, ընտարը եա՛ր ի,
Ուխտ անեմ՝ խամբուրեմ սուրբ Էջմիածին։
Աչաղ ուրբաթ օրը կաթաւ Երուսաղէմի լոյսը,
Լուսաւորչու եաւըն ի խոբանի փոսը,
Պատարագ կը կայնի եպիսկոպոսը,
Մեռոնդ բաժնուաւ, սուրբ Էջմիածին։
Օխտը գիւթան ունի, կ՚անի ընդար ցանքը,
Թուղթ, կիր, քար կրօղը չինէր է վանքը,

Եկեցէ՛ք, տեսեցէ՛ք Աստուծոյ կամքը,
Ուխտ անեմ՝ խամբուրեմ սուրբ Էջմիածին։
Իջման տեղը ղուռմիշ արեր զանջիլը,
Եկեցէ՛ք, տեսեցէ՛ք ոսկէ ղանդիլը,
Հազարաթդ կը քաշի էն Աշագիւլը,
Մեռոնդ բաժնուաւ, սուրբ Էջմիածին։

Նաշագէւ։

## Գաղթականութեան 'ի 1828 ամի։

Հասան խանի դարդ ու բալէն մեզ բերուց, աման, Բայազիդ,
Փլքը արուց մաքի միջին, որ տանի Թէհրան՝ Բայազիդ։
Ռուսն եկաւ Ապարանն, առաջն կտրեց բօրանն.
Խարձեցինք քօչ ու քուրանն՝ եկանք քեզ սէհրան՝ Բայազիդ։
Եկանք Քեօրփալուի դուզն, ղարըղ էլան դամէշն ու եղն.
Անց կացանք Սև ջրի սազն, բաթլախն էր եաման՝ Բայազիդ։
Որ եկանք Արազի ափն, կորըուեց Խաներիս Թափն.
Վառեցինք եաւշան ու չօփն՝ ծուխն արինք դուման՝ Բայազիդ։
Ե՛րբ որ հասանք Խալըֆալըն, մոխկ տո՛ւր աղքատի հալըն.
Եկաւ էն չո՛ւն Սաֆար Ալըն, մեզ տարաւ հուրեան Բայազիդ։
Վա՛յր եկանք Արհաջուտակըն, Թալըմ էլանք Հէյդար Բէկըն.
Աւրիլ ամսոյ տասնումէկըն սարերդ էր բօրեան՝ Բայազիդ։
Եկանք Օրգովու սարերն, բացուել էր կարմիր քարերն.
Ալրեցինք սպլի Թառերն՝ ծուխն արինք մորխան՝ Բայազիդ։
Վայր իջանք Օրգովու սարէն, շատ հորթ ու ձագ անկաւ քարէն.
Չի՛ գանուիլ մանր փարէն՝ ոսկուցն գիւման Բայազիդ։
Ելանք Ջագեանլուի դօշէն, վայր եկանք Արծափու քեօշէն.
Ումուտ ունուց Բահլուլ Փաշէն, ալ չ'լինի Թալան Բայազիդ։
Եւ'ի ու մէկ բարձկան ուլախ, դօշակս էլաւ կակուղ փալախ.
Երբ անց կացանք Ղարա-Բաւլաղ, արխայըն էլան Բայազիդ։

Այրած ղամիշ ու եաւշան, չի՛ գտանվում հացի նշան.
Գներիդ երթայ Հինդ ու Քեաշան, դուն երթաս Թեհրան՝ Բ՜դ
Տավարն ղրկեցինք արոտ, սարեր ունեն անջուր՝ անխոտ.
Մեք մնացինք մածնի կարոտ, կորեցի մերան՝ Բայազիդ։
Հատ մարդ մնաց Ջանգեզուռն, Ճամբին զուեց Ճանճն ու բուռն.
Բարձր տեղ է Ալդիգեուռն, աղբիւրդ էր Թառլան՝ Բայազիդ։
Կոխու հորթն տուի տէրտէրին, ինչ որ կթեց իմ հօր խէյրին,
Տան օրից յետոյ յետ բերին, ի՞նչ կ՚լինի չարան՝ Բայազիդ։
Ասի՝ տամ մի բարձկան իշի, նախը չ՚լինի ղուրդ ու ղուշի.
Վերջն տուի մեց ղուռուշի, էն էլ առան սալխան՝ Բայազիդ։
Կարապետն առեց խօսքի սաղն, չորացաւ բաղչան ու բաղն.
Քանդեցին այվան օթաղն, ափսո՜ս Երևան՝ Բայազիդ։

Մորադէս։

Ռուսաց-պարսքեան այնժամուքէն, որը գրել է Մուրօլէյ
ոճի 'ի տան խարատ։

Ակա՛նջ արա, Աշըղ Շիրին, ասեմ քեզ աքլորի բանն[1].
Մեյդանի աքլորն եմ պատմում, որ նստած է Հուռմայ տանն[2]։

Աքլորներն խորհուրդ արին, սահմանեցին կարգն Եգիպտ,
Քանդեցին կէս Եւրոպան, պատճառներ ետուն սուտումուտ.
Ամէնքն էին անխղճմտանք, սրտներումն չունէին գութ,
Անհամար ոգիք չարչարեցին, արիւնն թափեցին պուտ՝ պուտ.
Ցորեան՝ գարին վերջացրեցին, չ՚ճարուեցաւ մէկ բուռն կուտ,
Աքլորն՝ կուտից սովայի, աղբ էլ կուտէ օրն հինգ փութ.
Իրանց հօրն ժամհացն է՝ ողորմի հետ չունէին բանն։

Կտուցներն շատ էր սրված, ամէնայն մարդ վախենումէր.
Թաղուլթեան Թուղլթ չէին տալիս, սիրտներն դէփ դողումէր.

1 և 2. Մ. Լենայի տանց վերջումն հրէհեա՛ պատմութեան տողը։

Աքլորաճուան մէկ բան չէր, մեծ Աքլորն շատ գազան էր·
Կուկլիկուկուն երբ որ կանչումէր, կէս Եւրոպան դղրդումէր·
Ծովն ու ցամաքն սարսումէր, Թռչունքն օդից փախչումէր·
Եթէ չէին հնազանդում, ամենեցուն նզովումէր·
Նզովք՝ անէծք արգելումէ Քրիստոսի սուրբ Աւետարանն։
Աւետարանն մէկ դիհ դրաւ Հռոմայ Պետրոսեան գահն,
Խաղաղութիւն հէչ չի սիրեց, բռնութիւնով տուաւ ահն·
Քրիստոսն իւր մահուամբ փրկեց, սա պատճառեց անխիղճ մահն,
Դահիճ Եզուիտաց ձեռքովն շիջոյց մարդկան կենաց շահն·
Խնայեցին ողորմելեաց կասկ անելոյ մէկ պահն·
Փոխան սիրոյն եղբայրական՝ ատելութեան առան բաժն,
Հիմքերն սկսան քանդել Աստուծոյ սուրբ շինուած տանն։
Ասիայն մինչ դեռ ազատ էր այս անշիջանելի կրակէն,
Յանկարծ բոցն տարածուեցաւ՝ դուրս բղխելով երկաբնակէն,
Տներուս չորս կողմն պատեց, մարդ դուրս չեկաւ նրան բակէն,
Տեառնք աքլորք շատ նախանձոտք՝ ազգն էր սերեալ Կաթօլիկէն,
Վրաստանէն, Իմերեթէն, Ախալցխայ և Շիրակէն,
Աստուած պահեց իւրեան տունն, որ չ'քանդեցին յատակէն·
Բայց կրակն դեռ չէ անցանում՝ որչափ կայ աքլոր գազանն։
Մէկ հատ աքլոր չորս աչքանի անոյ, բայց էր Թերահաւատ,
Գլխին ունէր [illegible] [illegible], բայց բնութեամբ էր [illegible] —
Ե[illegible] ղուրդեալը պոչի պէս՝ հանդերձըն ունէր յոյժ կրճատ·
Փուշ էր և չէր նման [illegible]՝ [illegible] աքլորաց՝ սակայն աղճատ·
Ղարսու անհամ [illegible] [illegible], ինքն անկին՝ գործն կուսատ·
Իւր հօր տունն շուտ մոռացաւ, ո՛չ յոյս ունի՝ ո՛չ սէր՝ հաւատ·
Կենդանի է երկակենցաղ՝ լուտասահեր երկաբանին։
Կարեկ, ցորեան, դարին կերան, գիւղացւոց տանը քանդեցին,
Մէկ խուղալի փափա ուտել խեղճերուն կարօտ Թողեցին·
Փափան նրանց գլուխն ուտէ, կարգ ու կանոն խանգարեցին·
Փափի սիրուղ տուն չի՛ մնաց, որ դրանց ոտքն չ'կոխեցին·
Օթախն առանձին արին, կանանց դասն խառնակեցին·

Նրանց տգէտ մարդիկն այս հնարքն քարող հաոկացին
Երբ որ լինն ամխոն անցաւ, հասու եղեն սաուԹեանն։
Քո գրած աքլորի դէմն՝ սանդրադլուխն բան էր գրել,
Թէ «Ակըլըն ձնուա — պակըլըր», սակայն ով է, հիչ չէր յայտնել․
Հռոմայեցւոց պատմուԹեան մէջ, չ՚գխտեմ, երբ եմ կարդացել,
Մէկ էգ աքլոր՝ նման արուի՝ մեծ դահակալ էր ընտրուել․
Մէկ տարուան յետ՝ զարմանք՝ տեսան աքլորն աքլոր է ծնել,
Ընհաչօյ է նորա անունն, ինչպէս պատմաբանն է գրել,
Էգ «աքլորէն ծնած աքլորն չարժեցոյց անչարժ վիմանն։
Մեր աքլորի պօլօձիկներն ախտաբներն բնաւ չ՚առան,
Թէ կարող է, Հռոմ զարկէ՝ էգ աքլորի պոչէն կախ տան․
Մսից գուրս եկած սապոնով երեսներն, Թող, լուանան,
Որ երեսաց մուրն վայր գայ, և սեւերես միշտ չ՚մնան․
Կաշին էլ իրանցն բաշխէ, Թող, քուրք չինեն վասն ձմերան
Այդ անփետուր աքլորներն՝ Պղատոնեան մարդոյ նման․
Մեք մեր չէշակ դառը պահեմք, զինումք Ջաոկի յարուԹեանն։
ԵԹէ մարդ են, հերիք է այս․ այլ անամօԹ են՝ խայտառակ
Քրիստոնէից ազգի մէջն, նաև այլոց մէջն են առակ․
Թէ խելք ունին, իրանց գործքն Թող մնայ անեն յառաջ բարակ,
Որ էգ աքլորն չունի կաԹ, չի տալ ոչ խեղ և ոչ կարագ․
Իսկ մեր ՊարԹևացին կոչէ․ «Էշիմյէ օղլէ էշ անասանէ»,
Ձի ես եմ ձեր Սամարացին և ձեր վէրքին կ՚առնեմ ճարակ․
Իսկ ով որ աք ինձ չի լսէ, նա է յիմար և անբանն։
Ցայտաւուրքումն էր նա գտել այն աքլորի հնուԹիւնն,
Ադամեցն յառաջ ծնուած, ասէ, նորա մեկնուԹիւնն,
Բայց այդ աքլորն էր ազդ առնօղ Պետրոսի ուրացուԹիւնն․
Վերջումն ինքն էլ ուրացաւ, երբ ստացաւ մեծուԹիւնն․
Կամենալով գլուխ լինել, բայց նատաւ վերջին դասումն
Եւ խոր բոլոր աքլորներով մնաց անլոյս խաւարումն․
Նոյեան տապանի ագաւնին յուշ առնէ քեզ դեռ այսքանն։

$18\frac{9}{1}55$։ Ս․ Վ․ Մ․

## Առ Բէհբուդեանց Իշխանն:

Իշխա՛ն Բարսեղ Բեհբուդեանց, դու պ՟րծ՟նց թագ ծ՟նցար,
Համայն քրիստոնեայ ազգի համար արեգակ ծագեցար,
Արեւելեան կողմերը՝ իբր մեկ փայլակ ծագեցար,
Ինքնակալ Կայսերին բարեխօս հրեշտակ ծագեցար,
Խաղաղարար աշխարհիս և՛ բարեհռչակ ծագեցար,
Զմերային սառնամանեացն գարնան եղանակ ծագեցար:

Յաղթեցեր գոռոզ թշնամին զօրութեամբ Անմահ փեսային,
Օգնական էր քեզ մարգարէն Երեմիա, և՛ Եսային,
Բոլոր քրիստոնեայ ազգն դառն արտասուալից կուլային,
Տիւ և գիշեր հանապազ՝ անդադար յաղօթս կային,
Աջողութիւն 'ին խնդրում քեզ և՛ Նիկօլայ արքային,
Արքայէն դուն մեզ համար անթառամ պսակ ծագեցար:

Ինն հազարաւ քառասուն հազարացն յաղթեցեր,
Լոյս էիր Արեւելեան, մութն և խաւարացն յաղթեցեր,
Արեւմտեան կողմնային զօրապետ՝ տէրանցն յաղթեցեր,
Անհաւատ, ինքնահաւան, հպարտ արանցն յաղթեցեր,
Յուսացար 'խաչն Քրիստոսեան Օսմանեան զօրացն յաղթեցեր,
Նմանող եղեր Մուշեղայ, զօրապետ Վասակ ծագեցար:

Նմանող եղեր Մուշեղայ՝ ազգասէր քա՛ջ զօրավարի,
Յաղթութիւնդ երկնային Թագաւորէն համարի՛,
Յուսացեր 'Նազովրեցի Յիսուս չքնաղն յաշխարհի,
Որ ետ յաջողութիւն աղնուաղնիդ յայսմ վայրի,
Հայկազուն ազգի համար Առաջին Արշակ ծագեցար:

Աստուած արքունացնի քեզ Արշակայ աստիճանին,
Երբեմն նմանումես Վաչան Ամատունեանին,
Քաջն Արամայ նման կրկին տիրող Հայաստանին,
Քաջալերեաց, քա՛ջ զօրավար, քա՛ջ լե՛ր Կայսերիդ հրամանին,
Ծառայ է քեզ հանապազ որդին Բարսեղայ Քեանհանին,
Ո՛չ ոք եղև քեզ նմանող, Տէր իմ, միայնակ ծագեցար:

Որդի Բարսեղայ Քէանհանի:

## Նո՛ր սիրահարին։

Ո՛վ սիրելի, մի պաչ տուր ինձ, մի՛ թողալ հասրաթ*,
Աստուած սիրես՝ մօտ արի՛, ռահմ արա՛, բի մուրվաթ**,

Բիչարա Մաջնունի պէս էլէլ եմ ջամալիդ մաթ,
Գեղեցիկ ես ղանաղան, դու ես մէկ Գիւրջի թաւադ,
Կուռս ճիտալդ քցեմ, ես՝ դու անենք խլթիլաթ,
Սաեղծաղէն հատանի՝ սէրն ունի շատ լազզաթ։
Ընկայ սիրոյդ կրակն, կորաւ խելք ու քեամալս,
Չորացած վարդի նման սոհմիշ էլաւ ջամալս,
Ի՞նչ կուլի՝ ռահմ անես, հարցանես արզ ու հալս,
Ծարաւ եմ, ջուր եմ ուզում, պռընդներիցդ տո՛ւր շարբաթ։
Էյ Նազանի, ինձ ղօնաղ տա՛ր քո տունը, մէհման արա՛,
Գուլաբ շաղ տո՛ւր մազերիդ, հասով ռէյհան արա՛,
Սէրդ ինձի սպանելոյ, դարդերիս դարման արա՛,
Եթէ դարման չե՛ս անիլ, ե՛լ՝ գնանք շարր ու շարիաթ։
Բօյըդ ինձ լոյս կ'տայ նոր շամչիրաղի պէս,
Ծիծերդ վարդի կոկոմ՝ ծոցդ բաղչա բաղի պէս,
Բիչարա Ռուստամին պահել ես դուլթաղի պէս,
Իմ սիրելի, սաղ ըլնես, չե՛մ ուզիլ մալ ու դովլաթ։

Ռուստամ։

## Վասն ունայնութեան ամենայն բանի։

Աշխարհումն ամենայն բան մին դատարկ ձայն է, իմացէք[1],
Դիփ անհիմն են, իսկ հիմնաւոր Ած միայն է, իմացէք[2] ։

Ութսուն տարի կեանք ունենաս՝ քառասուն ամն դիշեր է.
Մինչ 'ի քամին երեխայ, վաթսունամեայն յատուկ ծեր է.

---

* և ** Ամենայն տանց վերջումն հրհնեմ՛ պայտոնէն տողի։
1 և 2. Ամենայն տանց վերջումն հրհնեմ՛ պայտոնէն տողի։

Ասէք՝ տեսնեմ, մարդն էլ այս աշխարհումս ինչի՞ տէր է·
Տան տարուայ համար քաշած ջաֆան ունայն է, իմացէք։
Շատ մարդ կայ, որ յիսուն տարի չըրչըրւլով փող է կուտել
Յայտնի գիտենք, որ կու մեռնի՝ չի՛ կարիլ այն փողը ուտել·
Այնպէս մարդոյ սրտի մէջ սատանայն սենեակ է գտել·
Էն փողն գլխի, յետ ու առաջ, դժոխքի փայն է, իմացէք։
Երդում ուտելն մեզ համար եղել է պարտաւորութիւն·
Սուտերեամբ էլ է ուտում այն, որ ունի հարկաւորութիւն·
Եկեղեցի գնալ՝ գալն դարձելայ կեղծաւորութիւն·
Ում գործն երդումի անկաւ՝ էնպիսայ փայն է, իմացէք։
Ինչ մեղք սիրեմք՝ Թո՛ղ անենք, վերջն առանց տեղ չենք մնալ
Դժոխք էլայ խօմ կու գնանք, Թէ արքայութիւն չենք գնալ։
Մեր կամքերից երեւումէ, որ սիրումենք գողանալ՝ չնալ·
Դարդ մեք անիլ՝ տարտարոսն երկայն ու լայն է, իմացէք·
Թէ Հռոմ, Թէ Ռուս, Թէ Յոյն, Թէ Թուրք, Թէ Մօլթանի,
Մէկս մէկու օգնական են՝ իբրեւ իւրեանց ազգականի·
Այս կանոնս էլ չի՛ խախտել, Սէյեադ, ցօրն դատաստանի·
Մէկ մէկու անհաշտ Թշնամի միմիայն Հայն է, իմացէք։

$18\frac{25}{3}57$. ՚ի Սալաղայոց Զօրն Հայոց։ Սէյէադ։

Ի հանդէպ ոտանաւորին «Նստիր, Շիրին, ասեմ քեզ»
յիշատակարանոյն Տ. Հայ-Կարապետին Մ……… է։

Բաւականին բան գտաւ այս անպիտան աքլորն,
Թո՛ղ հիմա բան համարուի, Թէեւ չէր բան աքլորն·
Որովհետեւ աքլորոյս ես պատասխանի աքլորն,
Ուրեմն Թո՛ղ արԹնանայ այդ բանական աքլորն,
Այդ վայրապար ձայն տուող՝ ինքնահաւան աքլորն·
Գիտասցէք ո՛ր աքլորն· այն Պետրոսեան աքլորն·
Զէ Թէ արտասուող մարդն, այլ ուրացման աքլորն։

Երբ դուրս ելաւ հաւկիթէն՝ էր սա Հայաստանումն,
Այժմինքն՝ մեզ մօտահաս եղած Շիրակուանումն.
Ս`եղէն ծնած, բայց հիմա չ՚եղած մեր պայմանումն՝
Որոշ կատար առնելով Արաքաց սահմանումն,
Օտար ձայներ սկսեց հանել Ռուսաստանումն.
Կամելով մուրհակ պահել Հայոց գանձարանումն,
Նոր Սիօնին՝ եւ անուն Նոր Հայաստան՝ աքլորն։

Ռամկացը միշտ խաբումէ այս աքլորի փետուրն.
Բայց՝ խուր արեանն է ծարաւ, խուրանում եղած սուրն.
Ինչո՞ւ է կուպր բերում կաթնավտակ աղբիւրն.
Բաւական է քո մայրին Սէյեադի ձգած հուրն.
Ցիւր ամրութիւնն յուսալով՝ միշտ կ՚խախտուի ամուրն.
Աշրաթափ այծն սկսեց պղտորել աղնիւ ջուրն.
Կուտ չի՛ տուին, զայրացաւ այդ Աբբայեան աքլորն։

Սա անվաւեկ մնալով, ձայն է տալիս անդադար.
Այս մասին՝ խոր միտքն՝ խորեան չարչարումէ չարաչար.
Ինքն՝ խոր ական գերանն չ՚առնելով, կոյ խաւար.
Ձեր աչքի ձողն հանեցէք, գրումէ այլոց համար.
Անանուխով՝ համանով չի՛ լինիլ Աստուած յօժար.
Հեռուէն թեւ թափ տալով՝ չ՚կարաց գտանի հնար,
Աստղելոբան դառաւ այն գիտնական աքլորն։

Այս աքլորն կորեկին՝ գարւոյն փափագ լինելով,
Կուտ չ՚ստանալուն համար մեզ հակառակ լինելով,
Կեղծուպատիր՝ խորամանկ՝ երկաբնակ լինելով,
Հայոց համար Վէստ-Սարգիս, կրկին Վասակ լինելով,
Հովուապետից ստացած բարւոյն ներհակ լինելով,
Ինձնում ժամանակ դառւ, անժամանակ լինելով
Հռոմայ մեծ աքլորի ոգէտ թարգման աքլորն։

Այս աքլորին թողալով, Հռոմայ աքլորն ասեմ.
Այն մեծաշուք աքլորի բարի համբաւն սկսեմ.
Փողով ծախուած թողութեանն՝ արդարութեանն սպասեմ.
Փոխան նոր սիրտ ունելոյն՝ մեղաց քաւ...

Նորա վառեկ պահելն ուղղեմ, չէ՛ թէ բամբասեմ.
Խօսքիս կանգնելոյն համար ես մի դատարկ կարաս եմ.
Որքան ձայնէ՝ կ՚ստանայ ինձնից այնքան՝ աքլորն:
Ունայնաբան վարդապետ, լո՛ւր զիմ ասութիւնը.
Իջմիածնէն վե՛ր առի Ռօլայ հին պատմութիւնը,
Անկեց լուայ իսկ Հռոմայ մեծ աքլորի անունը,
Նորա լա՛ւ հանգամանքը և փառաց մեծութիւնը,
Պօղոսի ու Տիմօթէյ հոգւով ազդեցութիւնը.
Երբ սկսաւ զօրանալ, պատել Յաբեթին տունը,
Այն տուների մէջն ունէր գերաստիճան աքլորն:
Սակայն Եւրոպ և Ասիա, երբ տուներէն դուրս ելան,
Այսինքն՝ աւետարանի միջօրեայ լոյսն ունեցան,
Այն մեծաշուք աքլորն գլխովին անարգուեցաւ,
Աթոռիցն՝ գահիցն, վա՜յ ասելով, վայր իջաւ,
Աստիճանն՝ պսակն ստորացաւ, գիջացաւ.
Թարգման աքլոր, ջան աքլոր, ահա՛ քեզ վիշտ, ահա՛ ցաւ.
Յառաջ գլուխ վերնատանց, հիմա կործան աքլորն:
Ազնուազարմից միայն պատմելով պատմաբանն,
Եւ Նորին բանք ազդարար իմ միամտութեանն.
Հմուտ գոլով Մուրթքէի անուշիկ պատմութեանն,
Բնական է ինձ սիրել Թագաւորիս հրամանն,
Արև կարդալ իմ եղբարց, պատուել իմ սեպհականն.
Շիրինս՝ Հայոց տղայ, և ինձ մայր՝ Հայաստանն,
Ինչո՞ւ է ինձ վարձատրում երկադուան աքլորն:

---

## Գուշաֆ Վէրնոյն:

Քուֆթայի կամ Եաշնու կարօտ վարդապետ,
Քեզ համար Զըլըուրի նշան էլ չ՚կայ.
Դաշտն Արամայ է խաշնարօտ, վարդապետ,
Քեզ մինչև Նայելայ հրաման էլ չ՚կայ:
Արարատն համայն ազգաց մայր գոլով,

Որոյ դաշտն ընդարձակ բնութեան հովուզով,
Աղաւնին կ'արձակէ կանաչ տերեւով,
Իսկ ագռաւին բաժին՝ Եաւշան էլ չ'կայ:
Աստուածս՝ մարդ չ'խօսէ աքլորի տալին,
Տանուհինգ տարուան ես անուանում կլկլին·
Սուտն՝ Աշուղի գործ է ըստ մեծի մասին,
Այնքան սուտ ես գրել, Թարգման էլ չ'կայ:
Սուտ ասելով, դու կորեցիր իմ հացն·
Ալին քանդի քոյ ամբարն ու ջրաղացն·
Էլ ինչ գրեմ առասպելից դիմացն,
Ինձ ու ձեզ համարձակ բերան էլ չ'կայ:
Շիրինս՝ Հայոց աղայ՝ սիրոյ եմ ծարաւ·
Տուածդ՝ կլկլին քեզ ետու դրաւ·
Քոյ առացուածքդ ինձ ասել տուաւ,
Ինձ մեղադրելոյ մէկ բան էլ չ'կայ:

Մուշեղ Շիրեն:

## Խրատ:

Դարձ եկէք, անգէտ մարդիկ, այս աշխարհի բանը լացէք,
Որ կորաւ մեր մեղքիցն՝ այն չորս հազար ջանը լացէք·
Մարմինն հողեղէն է, միշտ հոգւոյ անուանը լացէք,
Քաշել կայ մեղք ու վարձքը, վերջին դատաստանը լացէք:
Իմացէք, յիմար մարդիկ, դատաստանին չարչարել կայ·
Վա՜յ մեղաւորի հոգւոյն, անձն 'մէջ կրակի հարել կայ·
Մարմինն հող կ'դառնայ, այն խեղճ հոգւոյն քոյքոյել կայ·
Կու կորի Տէր ինքն մեր արդար դատաստանը, լացէք:
Իմացէք, յիմար մարդիկ, այս աշխարհիս բանն փուչ ա·
Մեռնելիս՝ մեզ կութուի աշխարհս մի մոլոր քուչա·
Մեղաւորին կ'չարչարեն, մեղքն լուր չընքին սուչ ա·
Ով որ արժանաւոր է, նայէք՝ անարժանը լացէք:

ՅԱստուծոյ խնդիրքս այս է՝ վերջի օրն լինի բարի·
Մեղքին պրծնում չ'կայ, ո՛չ հարիւր՝ ո՛չ հազար տարի·
Վա՜յ նորա գլխին լինի, պայծառ հոգին կ'չարչարի·
Պարտաւոր եմք համար տալ, վերջին պատասխանը լացէ՛ք։
Ասում է Գիւրջի-Նաւէն· վա՜յ ինձ, բնաւ չունիմ հոգի·
Հրեշտակն՝ մեղաւորաց, խիստ զարհուր, սրտին կ'չոքի·
Կու քաշուի տամարներն, ցաւն ջանը կ'նորոգի,
Մարմինն սարսափելի կու մա՛նի տապանը՝ լացէ՛ք։

Գիւրջի-Նաւէ։

## ԱՇԽԵՆ։

Աշխէն, արի մէկ պաչ տուր, ջանիդ մատաղ·
Ես մեռնումեմ, քեզ ու քու նանիդ մատաղ·
Մատներումդ ոսկէ մատանիդ մատաղ,
Նախշ ես անում՝ քարգահ ու բանիդ մատաղ,
Կարմիր սուրաթ՝ ալխաք կուլ ջանիդ մատաղ։
Լաւութիւնը լաւ կուլի աշխարհումս,
Քեզնից աւել էլ ճար չունեմ ճարումս,
Թէ Մարալ ես, ե՛կ՝ մա՛ն արի սարումս,
Ես կապնած եմ իմ տուած իղրարումս·
Հարսանիքդ կու նստի այս տարումս,
Ծրծիդ վրէն կախած նշանիդ մատաղ։
Աշխարհումս չե՛մ ճարվիլ քու դօլիցը,
Թէկուզ բերեն Հինդ ու Ստամբօլիցը,
Խելքս գնաց՝ դուրս եկար էն ղօլիցը,
Ջէյրանի պէս, տեսայ, եկար չօլիցը,
Կաքաւի պէս ձայն ես տալիս քօլիցը,
Անուշ խօսքիդ՝ ճարտար բերանիդ մատաղ։
Ես քեզ համար մեռած եմ թաղուածի պէս,
Գիշեր՝ ցերեկ մալուլ եմ շաղուածի պէս,

Խելքս գլխէս դառել է քաղուածի պէս,
Ջիգեարս էլաւ Նարին մաղուածի պէս,
Նարգիզ, Սուսան, Սումբուլ ես քաղուածի պէս,
Բէր՝ հոտ առնեմ, վարդ ու բէյհանիդ մատաղ:
    Իշխի բանը, խօմ գիտես, ինչպէս կուլի,
Մինչի իրան հասնի, ջանը կէս կուլի,
Մէկ պաչ չի՛ տաս՝ Թէհրանը ինձմէն դես կուլի,
Երկնքի մալաքները քեզ պէս կուլի,
Ապա տեսնենք՝ ո՞ւմ հաղուստը էդպէս կուլի,
Կարմիր շաբիկ՝ կանաչ մինթանիդ մատաղ:
    Թէ բուլբուլ ես, բաս ինչո՞ւ չես բաղումը,
Կարմիր վարդ ես՝ բաց էլած եարփաղումը·
Լուսնեակ ես չարխի մաղալաղումը,
Կայսերի պէս կանգնել ես օթաղումը,
Միսկին-Բուրջուն պահիլ մի դուլթաղումը,
Թամբաշ արա, Ծա՛ղ՝ քու գիւանիդ մատաղ:

Միսկին-Բուրջի:

Նոր բէհար ես՝ գոզելի, Թազա նովբար ես՝ գոզելի,
Անման ես՝ գեղեցիկ, Նաշխ ու Նկար ես՝ գոզելի,
Իդ քո սուրահին չաֆաղդ շամս ու ղամար ես՝ գոզելի,
Արեւելմէն կողմիցն կապած կամար ես՝ գոզելի,
Քեզ չի՛ հասնի էլ գովասանք, դուն անհնար ես գոզելի:
Հէնց սիրուն չաֆաղ ունես, լա՛ւ է արեգակի վերայ,
Փայլումես շամալի պէս, դոյնով ես կրակի վերայ,
Թագաւորից անձարով ես ոսկէ աշտանակի վերայ,
Մարգարտի պէս փայլ ես տալի Թագաւորաց Թագի վերայ,
Կամ խաթա ես՝ խութա ես, դուն անգին քար ես՝ գոզելի:
Նազ անելով շուռ ես գալի Նակըշքեար օթաղի մէջն,
Թօփ կարմիր վարդի նման ջրկուել ես եափրաղի մէջն,

Քաղցրահամ շամամներդ բարձրացել է Թաղի մէջն,
Ղուխ բօյըդ Թմ՛չը է տուել արքայութեան բաղի մէջն,
Միշտ հանապազ կանաչ ես, դուն սալբի ծառ ես՝ գոզէլը:
Քեզ չի համնիլ էլ գովասանք, չ'գիտեմ՝ ինչո՞ւ օրինակ ես,
Գարնանային աղաւնի, ճարտարախօս ծիծեռնակ ես,
Բաց արա ծոցիդ դուռն, արքայութիւնը ի՞նչ կ'փակես,
Գիտեմ՝ անոյշ հոտ ունես, վարդ՝ բէյհան՝ մանուշակ ես,
Դուրը ջավահրի հետն խառն ես, դուն անգին քար ես՝ գոզէլը:
Ո՞ր տեղից որ տեղ, Թումբինջ, ուստա եկար դուն էս բաղն,
Սիրտդ է պոզա գալում, հորէս եկաւ էշխի չաղն,
Դուրս ելնելու ճար չունիմ էլ, Թէ հոգիս տանի մահն,
Դարդերս շատացեր է, ի՞նչ անէ հէքիմ՝ ջարրահն,
Էդ քո սիրտդ կրակն է, դուն դեղ ու ճար ես՝ գոզէլը:

Թումբինջ:

## Ջան գէօլում, ջան ծաղիկ:

1

Ծառուխ տակը մանիշակ, ջան գէօլում՝ ջան ջան [1],
Իմ եարը քանց քեզ շիշակ, ջան ծաղիկ՝ ջան ջան [2].
Ութ Թումանիցն անց կենամ, ջան գէօլում՝ ջան ջան,
Քեզ կ'անեմ եարիս մշակ, ջան ծաղիկ՝ ջան ջան:

2

Տեղ եմ քցել ղալամքեար,
Մէջն եմ դրել Քեալանթար.
Ես մի բուլուլ լեղակ եմ,
Բէզիրգեանի տեղակ եմ:

3

Սիրել եմ սերն երեսին,
Բէյհան Թերն երեսին.
Ով իմ սիրածը ինձ չի տայ,
Աստուծոյ կրակն երեսին:

---

1. Ս. Տ. տանց առաջին և երրորդ տողուցն յետոյ կրկնելու:
2. Ս. Տ. տանց երկրորդ և չորրորդ տողուցն յետոյ կրկնելու:

4

Ջաղացս մանի մանի,
Քունս անուշ կըտանի.
Իմ եարս սարում՝ քօլում,
Իմ քունս ո՞նց կ'տանի։

5

Ջաղացիս դուռը տաշած,
Աղըրխիս գիւլը քաշած.
Կեռ կեռ ունքերիդ մեռնեմ,
Ոսկէ ղալամով քաշած։

6

Հանդէն գաս՝ գեղը մանես,
Իմ քցած տեղը մանես.
Ինձնից գլուման եար բռնես,
Բի մուրվաթ, հողը մանես։

7

Մտիկ արէք էն ղըշին,
Ոտը դըրել փըշին.
Գըլուխս ղուրբան կ'տամ,
Ձաւ աչք, կարմիր թշին։

8

Ուչխարս արել եմ դուզը,
Ջոկել եմ ղարագեօզը.
Ըղլուխդ ղարկլ՛ նաչխեմ,
Թափ տո՛ւր քաքուլիդ թօզը։

9

Անձրև եկաւ շաղալէն,
Ուռու տերև դողալէն.
Հըրէս եկաւ իմ աղբէրն,
Ալ ձին տակին խաղալէն։

10

Քարիս տակը քարոտ ա,
Պարնի ձիանն սրոտ ա.
Թամամ օխար տարի ա,
Քոյրն՝ աղբօրը կարօտ ա։

11

Գետը նի՛ մտայ, խոր ա,
Քաթան շաբիկս նոր ա.
Իմ նանին խաբար արէ՛ք,
Ես օլքեայ օլքեայ կորայ։

12

Մեր կտուրը քօ՛չ ա երթում,
Քօչ քօչի մէ՛ջ ա երթում.
Նըրնէկ էն քուեր աչքի լո՛յն,
Օխտն աղբօր մէ՛ջ ա երթում։

13

Գնացի ջուրը ջըրի,
Ոտս ընկաւ օձի լեղի.
Իմ հօրն ու մօրն ի՞նչ ասեմ.
Ինձ տուլին ղարիպ տըղի։

14

Տուն եմ չինել ղանանայ
Ղուղու կ'տամ գիմանայ.
Կուռդ մէկնի՛՝ ջուրն ինձ տո՛ւր,
Խմեմ՝ սիրտս հովանայ։

15

Դու նստել ես դօշակին,
Ուշ ու միտքդ փէշակին.
Խմել ես նուռն գինին,
Հոտ քաշել մանուշակին։

16

Ես մի կանաչ խիար եմ,
Քո ջանին խիթիար եմ.
Երթաս՝ երթաս, յետ կաննես,
Իմանաս՝ բէլլու եար եմ։

17

Սարից ջո՛ւր ա երթում,
Հարցրէ՛ք՝ ո՞ւր ա երթում.
Քենին մահանայ ա արել,
Եարօջը տե՛ս ա երթում։

18

Ծաղիկ ունիմ՝ ալայ ա,
Ալայ չի՛, ալվալայ ա.
Եար բունիլը լաւ կըլնի,
Բաց թաղալըն բալա ա։

19

Կանաչ տեփուր մեյտան ա,
Տեսէ՛ք՝ իմ եարը տանն ա.
Նոր ծլած բեղիդ մեռնեմ,
Ոսկեթելի՛ նման ա։

20

Մի ջաղաց երկու դըռնի,
Բարձ դըրէ՛ք՝ եարս կունի.
Ես՝ դու մի բաղում պ'տինք,
Ես չինարի, դու նռնի։

21

Սարէն կ'գայ ձիաւոր,
Մեր տունը չարդախաւոր.
Հրէս եկաւ իմ աղբեր,
Երեք օրվան թագաւոր։

22

Արևը կամար կամար,
Կապել ես ոսկէ քամար.
Ցխուն օր պաս եմ պահել,
Իմ աղբօր Ճամբի համար։

23

Մատանիք ոսկէջրած,
Ախ տղայ, դու ինձ գրուած.
Դու խանին նօքար պըտես,
Ես քո ծոցը զանջիրուած։

24

Կանգնել ես, կանչում էլ չես,
Բօյիցդ ամաչում էլ չես.
Եկայ՝ կշտովդ անց կացայ,
Տէր ես՝ Ճանաչում էլ չես։

25

Սարի թրթնջուկ թաղա,
Ջուզ ու մեխակ քեզ մաղա.
Ինձ պէս նազանի աղջիկ,
Քեզ պէս տղին ո՞նց սազայ։

26

Բերդիս կտերն ցել ունիմ,
Ալ արըշում թել ունիմ.
Թոփլիկ մըլիկ սարկաւագ,
Ես քեզանից մէյլ ունիմ։

27

Հաց եմ թխել, դարի ա,
Իմ եարը սաֆարի ա.
Սաֆար երթալուդ մեռնեմ,
Խօսքերդ շաքարի ա։

28

Սարի խոտը ծեղմէ ծեղ,
Աղբեր երթանք միատեղ.
Որ հարամին վըրայ տայ,
Գլուխս տամ գլխիդ տեղ։

29

Խնձոր ունիմ կըծած ա.
Չորեք կողմն երծաթած ա.
Աղբերս ուզեց, տուի ո՛չ,
Ազիզ եարի ղըկած ա։

30

Կանգնել ես ախտ բախա,
Լաչակիդ տուտը կախ ա.
Սև տղայ, սպիտակ աղջիկ,
Բռնել էք իրար եախա։

31

Երդիկ երդիկ բռնել ես,
Երդկակոճին կռնել ես.
Իմ նանը քեզ աղջիկ չի՛ տալ,
Ինչ քունդ կորել ես։

32

Արևն ընկաւ մեր պատին,
Արքայութիւն իմ տատին.
Հոգիդ դառնի, ա՜յ տատի,
Ինձ խե՞ տուիր կռնատին։

33

Ջրի վերայ սաղ պլտի.
Իմ օրդակը ղաղ պլտի.
Ի՞նչ եմ անում Թուլունգլին,
Իմ եարը Ղաշբաղ պլտի։

34

Ա՛յ եար, ա՛յ եար, կռնել ես,
Մորայ ազլուխ բռնել ես.
Բարև տուր, առար ո՛չ,
Մադեար Թարկս տուե՞լ ես։

35

Բաղումը կար բաղմանչի,
Ղուլին ածէր ու կանչէր.
Թաբունղաւած՝ դուլսթռան,
Մինն իմ եարի նման չէ՛ր։

36

Մեր դրանը ուռի ծառ,
Ոսկէ կաքաւ վրէն թառ.
Երթայր ու գայր՝ օրօր տայր,
Ալւան ծաղիկ տանիլ տայր։

37

Հա՜յ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու տորոն ծաղիկ.
Ալւալայ խալըս եմ կիտել,
Էն էլ քեզ օրօն ծաղիկ։

38

Նախրատափին խնկի ծառ,
Խնձոր քցեմ՝ արի՛, տա՛ր.
Ուրբաթ՝ շաբաթ քեզ մօհլաթ,
Լյս կիրակի արի՛, տա՛ր։

39

Իմ աղբերը սարումն ա,
Ղուլին դօտկածալումն ա.
Աղբեր ջան, շուլդ ածա՛,
Քիրդ Լօռուայ քարումն ա։

40

Մի բարձ եմ արել՝ լիմն ա,
Մինն էլ եմ արել՝ լիմն ա.
Գեանջու քարւանն գալիս ա,
Միջի Թաւադն էլ իմն ա։

41

Տեղեմ քցել՝ փոթ կ՚տայ,
Բարձ եմ դրել՝ սոթ կ՚տայ.
Մեռնեմ միջի քնողին,
Անյշ խնկահոտ կ՚գայ։

42

Ա՜յ տղայ, դու հուր ես՝ մուր ես,
Ես ծարաւ եմ, դու ջուր ես.
Մուղարըլամ՝ Թառլամ շոր ես,
Համբարձում, գիշերն ո՞ւր ես։

43

Արևն արեգունի,
Իմ եարս Գեղարքունի.
Գեղարքունւոյ սարը փուլ գայ,
Բալքի իմ եարը տուն գայ։

44

Ամպելայ ամպի տակին,
Ծունկս ծնկանդ տակին.
Ես քեզ ո՞ր տեղ սիրեցի,
Մեխակի ծառի տակին։

45

Մեր դրան առաջին մի դարան,
Տղայքն եկան, նի՛ դառան.
Կուռս տարայ՝ որ բռնեմ,
Թաղի ու Թուլայ դառան։

46

Մեր դրան առաջին մի դարան,
Աղջկերքն եկան, նի՛ դառան.
Կուսու տարայ՝ որ բռնեմ,
Շարած մարգարիտ դառան։

47

Ես աղջիկ եմ, ա՛լ կուզեմ,
Ալ ծալուծա՛լ կուզեմ.
Որ տունը որ ես մտնեմ,
Ոսկին սարէսար կուզեմ։

48

Աղջիկ՝ աղջիկ, ա՛լ աղջիկ,
Աչքերդ չալչալ աղջիկ.
Դու մեր սանը հարս պըտես,
Իմ քիրը քեզ Տալ աղջիկ։

49

Աղբեր հանաքիդ մեռնեմ,
Ոսկէ դանակիդ մեռնեմ.
Ճամբայ երթող՝ չէկ աղբեր,
Դուքքան բազարիդ մեռնեմ։

50

Ջաղացս մա՛ն եմ տուել,
Սիրել եմ, ջա՛ն եմ տուել.
Օխտը տարի սէրութին,
Մէկ օր պայման եմ տուել։

51

Ջաղացիս աջոյ կուռը,
Կ՚զընկայ միջի գլուլը.
Վա՜յ, իմ սիրած բլուլբուլը
Քարշեցին Խանի դուռը։

52

Արազը հեշտացելայ,
Ճամբէքը կոշտացելայ.
Իմ Նանին խաբար տարէք,
Մուշտարին շատացելայ։

53

Սանդ կ՚ծեծեմ, խաղ կանեմ,
Մաշիկը տոխ լախ կանեմ.
Ա՛յ տղայ, դու շատ մի՛ խօսալ,
Մուկն ըռխիցդ կախ կանեմ։

54

Հա՛յ է՛րն ա՝ է՛րն ա,
Տղայքն ձեր տէ՛րն ա,
Աղջիկք, դուք շատ մի՛ խօսօք,
Տակի դէհն ձե՛րն ա։

55

Ա՛յ օրօն, օրօ՛ն ծաղիկ,
Կարմիր ու տորո՛ն ծաղիկ.
Տարենը մի՛ հետ կ՚գաս,
Գամ քեզ օրօն, ա՛յ ծաղիկ։

56

Ա՛յ տղայ, դու հէրիս՝ մէրիս,
Ո՞ւր եկար դու կէս գիշերիս.
Տեղումս քեզ տեղ չ՚կայ,
Գլուխդ դի՛ր կռներիս։

57

Ա՛յ տղայ, դու բաղո՛մն արի՛,
Ոտներդ շաղո՛մն արի.
Էս թաղը ղալմաղալ ա,
Մա՛ն տո՛ւր, էն թաղո՛մն արի։

58

Ճրագ դնեմ լիսացու,
Կարմիր խառէն քիսացու.
Ես քո մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու։

59

Ծաղիկ եմ քաղել՝ դեղին ա,
Իմ եարը ձեր դեղին ա.
Հէլ ու մեխակ շատ ունեմ,
Հըրբէ եարիս ձեռին ա։

60

Ծաղիկ եմ քաղել՝ ա՛լ ա,
Ա՛լ չի՛, ալւալայ ա·
Եար բռնելը լա՛ւ կըլի,
Բաց Թողալը բալբալայ ա։

61

Ծաղիկ եմ քաղել նարինջի,
Ա՛յ աղայ, վէր արի՛, փինջի՛·
Իմ մէրը քեզ աղջիկ չի՛ տալ,
Քանի՞ ման գաս եաւրնջի։

62

Ա՛յ աղայ, դու բաղի միջին,
Ոտներդ չաղի միջին·
Կանչի՛, կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քո հաղի միջին։

63

Ա՛նց կենամ դետի կուռը,
Քաղեմ մի դասԹայ նուռը·
Ո՛վ իմ սիրածն ինձ չի՛ տայ,
Կ'քարշեմ Խանի դուռը։

64

Ա՛յ աղայ, դու սև չուխաւոր,
Սաղմոսը ծոցիդ սովոր·
Էրնակ կ'տամ էն օրը,
Տունս կ'գաս Թագաւոր։

65

Ա՛յ աղայ, իր անել տո՛ւր,
Մի մատը գիր անել տո՛ւր·
Ինձանից քեզ ճար չ'կայ,
Քաքուլդ վէր անել տո՛ւր։

66

Ջաղացի դուռը տարԹ ա,
Կտուրը լէքը մարդ ա·
Հորէս եկաւ իմ եարը,
Գօտիկը լէքը վարդ ա։

67

Աչուլիդ արասին ղուրբան,
Գլինուդ կարասին ղուրբան·
Ճամբիցը գալող աղբէր,
Սրտիդ հաւասին ղուրբան։

68

Վարդ եմ քաղել մաղերով,
Վայր եմ դրել շաղերով·
Հորէս եկաւ իմ եարը,
Ալ ձին տակին խաղալով։

69

Ջուր ա գալի լափ տալէն,
Երկու խնձոր ծափ տալէն·
Հորես եկաւ իմ եարը,
Թուխ դդակը Թափ տալէն։

70

Ձուն դնեմ վըրէն՝ խաշեմ,
Նի'լեմ կտուրը, եաշեմ·
Տեսնեմ, իմ աղբերը գալիս ա,
Չոքեմ, չաքմէքը քաշեմ։

71

Ջաղացի դուռը փոս ա,
Քար կ'քցեմ, կ'խօսայ·
Կանչի՛, կանչելուդ մեռնեմ,
Իմ նանի աղիզ փեսայ։

72

Ծաղիկ, Ծաղկևանայ ես,
Ալըդ Երևանայ ես·
Տարինը մի հետ կ'գաս,
Մադեամ նուբարխանա՛յ ես։

73

Ձեր բաղի դուռն բա՛ց ա,
Ոտներդ չաղով Թա՛ց ա·
Եարիցդ հեռացել ես,
Աչքերդ լէքը լա՛ց ա։

74

Աղջիկ, մազերդ հիւսէիր,
Թուշդ երեսիս քսէիր·
Ելլէիր բարձիս վերայ,
Բիւլբիւլի պէս խօսէիր։

75

Աղջիկ, գնանք մեր բաղը,
Պոկեմ շամամիդ Թաղը·
Իդ երեսիդ չաֆաղը,
Հանելայ սրտիս դաղը։

76

Այ տղայ, անունդ ա Սարգիս,
Արի՛ նստենք էս կարգիս·
Ես ու դու բաղում պտտիմք,
Ես չինարի, դու նարգիզ։

77

Մօտիկ արէ՛ք էն ղուշին,
Որը դրելայ փուշին·
Մեռնեմ չալչալ ունքերին,
Թուխ աչք՝ կարմիր Թուշին։

78

Սպիտակ ձիննալն ի՞նչ կանէ,
Սիրունն խալն ի՞նչ կանէ·
Եարն որ եարին սիրէ,
Աշուլխան ի՞նչ կանէ։

79

Ձուն դնեմ Թաւէն՝ խաշեմ,
Գնամ կորովը եաշեմ·
Եթէ եարս գալիս է,
Զոքեմ՝ չէքմէքը քաշեմ։

80

Այ տղայ, դուն ա՛լ կապուոր,
Տուն ունես չարդախաւոր·
Ին օրին էրնեկ կուտամ,
Իմ տուն՝ տուն գաս Թաղաւոր։

81

Սև հաւի ձուն 'փուրն է,
Իմ եարը Գեանջու կուռն է·
Գեանջայ, քու սարը փուլ գայ,
Բալքի իմ եարը տուն գայ։

82

Վերնաքամին գալիս է,
Թինդլայ մէջքս տալիս է·
Մէյդան արէ՛ք, անց կենամ,
Կարօտ եարս գալիս է։

83

Ջուր է գնում արխումը,
Աբըրշում ա չարխումը·
Ին օրին էրնեկ կուտամ,
Ջամարդ կանգնես խալխումը։

84

Մէկ խնձոր ունեմ՝ կծած է,
Բոլորքը զառով նըշխած է·
Աչքերս ուզեց՝ տուի ո՛չ,
Ախ՝ եարիս ղրկած է։

85

Գնացի, ջուրը տեսայ,
Ղարաքայ դուռը տեսայ·
Ծլած բեղերուդ մեռնեմ,
Իմ մօրս աղեղ փեսայ։

86

Գնացի ջուրը լուացք,
Սապոնս էր ոսկէջրած,
Իմ հէրն ու մէրն ի՞նչ անեն,
Ճակատիս էս էր գրած։

87

Իմ աղբերս ծառի տակին,
Սաղմոն կուան տակին.
Սաղմոն գլխ է դառել,
Լեզուն բիւլբիւլ է դառել։

88
Մեր տան յետնէն մի մառան,
Տղերքն եկան՝ յետ դառան.
Ձեռս տարայ թէ բռնեմ,
Դիփ լա՛լ ու մարջան դառան։

89
Սարերի սինձն ի՞նչ է,
Կաթն ու բրինձն ի՞նչ է.
Եարն՝ որ եարին սիրէ,
Խօսք ու զրիցն ինչ է։

90
Դար 'ի վեր ջուր է գնում,
Հարցրէ՛ք թէ ու՛ր է գնում.
Քենուն մահանայ է արել,
Իր եարի տունն է գնում։

91
Ջան գիւլում կտեմ՝ կ՚շարեմ,
Տօպրակը կածեմ՝ կու կարեմ.
Կորէ կտուր ման կուգամ,
Քանց քեզ լաւը կու ճարեմ։

92
Մեր տան յետնէն բաղչա կայ,
Բաղչի միջին ռէյհան կայ.
Ռէյհանը քաղող պիտի,
Ծոցումը խաղող պիտի։

93
Ա՛յ տղայ, դուն ասա՛՝ մ՚ասա՛,
Գդակիդ թափէն խասա ա.
Իմ մէրը ինձ քեզ չի՛ տալի,
Իմ հօրը քրթամ ասա՛։

94
Գիւլում գիւլում, գիւլ չիչ՛՛կ,
Ես ու դու մնենք մին դօշակ.
Մինչև 'ի լոյսը քըչփըչանք,
Լուսէն յետոյ կըրկըչանք։

95
Աղջիկ, կապէտ ա՛լ պիտի,
Բոխչէդ ծալ ծալ պիտի.
Ում տունն էլոր տուն երթաս,
Ոսկին սարեսար պիտի։

96
Մեր տան տակին ղար կանեմ,
Չալ ագռաւին քար կանեմ.
Թէ իմ սիրածը ինձ տան,
Գժուլթիւնս թարկ կանեմ։

97
Մեր բաղումը մի դարան,
Շատ չարմաղջիկ նի դառան.
Ձեռս տարայ թէ բռնեմ,
Դիփ թաղի՝ թուլայ դառան։

98
Մեր բաղումը բաղմանչի,
Սալբի ծառի նման չի.
Շատ չարմաղջիկ դուրս եկան,
Ո՛չ մէկն իմ եարիս նման չի՛։

99
Դու նստել ես գերանին,
Ղարղու չուլին բերանին.
Ոսկէ ղայթան 'տի գործեմ,
Դնեմ ջիբիդ բերանին։

100
Ա՛յ տղայ, դուն օտար լինիս,
Սև հաւի կատար լինիս.
Ինձ մէկ խումար եար սիրի,
Դուն ճօթ ու պատառ լինիս։

101
Ա՛յ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու տորոն ծաղիկ.
Հարսն ու աղջիկ մեծրել եմ,
Որ գան ու քաղեն ծաղիկ։

102

Ջուրը գալիս ա լափ տալով,
Երկու խնձոր ծափ տալով.
Հօրէն եարս գալիս ա,
Ա՛լ գդակը թափ տալով:

103

Գիւլում կասեմ՝ կ՚չարեմ,
Զուալը կածեմ՝ կ՚լարեմ.
Թամամ աշխարհը ման կ՚գամ:
Քեզնից լաւը կ՚ճարեմ:

104

Ես աղ ջիկ եմ՝ ա՛լ կուզեմ,
Բօխչաս ծալէծալ կուզեմ.
Երբ որ եարիս տուն կերթամ,
Գօտիկս թիրմա շալ կուզեմ.

. . . . . .

Խարագ Ջալի՛, իմ մի շահին ի՞նչ արիր,
Ճրագուն կերար, իմ թանկիրէ՞ն ի՛նչ արիր.
Փաղոցումն ման ես գալիս դիփ թադուն,
Ի՞նչ սա՚աթ ինձ ռաստ եկար, անարդ շուն,
Մումը հալեցիր, կո՛ւլ տուիր ճրագուն,
Մուզորդ կերար, բաս քո մայէ՞ն ի՛նչ արիր:
Մում ուզելիս՝ թա՛լ տուեցիր, խաբեցիր,
Նսօր՝ էգուց ձգելով, քեզ թափեցիր,
Գիլի նման իմ ճրագուն լափեցիր,
Աշկերտի՝ քարգարի փա՛յըն ի՞նչ արիր:
Հարցրեցի աշկերտին ու քարգարին,
Մումս ի՞նչ արեր, ախըր թամամեց տարին,
Ճրագուն փոխ լինի ձեր որդւոց շարին,
Միջին տարար՝ չուալիս թա՛յըն ի՞նչ արիր:
Առաւօտէնց գնացի դուքքանի դուռն,
Պարտատէրերն կորել՚ին չորս կուռն,
Երկու շահի հանեց՝ դրեց իմ բուռն,
Ինձ խաբեցիր, էն մի Հային ի՞նչ արիր.
Գանգատելով՝ Պօլիցէքն իմաց արի,
Դեսեանիկ բերի՝ դուքքանը բաց արի,

Բան չի՛ գտայ, գլխիս տուի, լաց արի,
Համչի Մելքոն, է՜ն ղալմաղալն ի՞նչ արիր։

Համչէ Մելքոն։

## Մօղէ։

Քեզի բերի յԷջմիածին,
Սիրտս գնաց տափակ հացին.
Օրով՝ ցերեկով բռնեցին,
Կանչեցի. հարա՜յ իմ Մօղի [1],
Ճակատդ ղաշխա իմ Մօղի [2]։
Գրիգորն ասաւ. քո Մօղին տարան,
Երկու Սէրվաղ չաթուն դրած պօղին՝ տարան,
Դու մի՛ ասիլ սապոն չ՚կայ,
Տօպրակով խորխողին տարան։
Քեզի տարան՝ մորթեցին,
Կաշիդ դանակով քերթեցին,
Նրիդ ու անդամդ ջարդեցին՝
Դրին չորս տեղ փայ՝ իմ Մօղի։
Քարշեցին՝ երկու լիտր էկաւ եղն,
Իլահի կարճ կարճ կողերն, —
Քօռ Մաշադի Ալու տանն
Նլար ղավուրմա՝ իմ Մօղի։
Քեաղըղխանի բաղչի տակին՝
Մէկ փասում փորդ թափած էր,
Մտիկ տուի քարի միջին՝
Ընտեղ պձեղներդ բաց էր,
Ընտեղ սրտիս դայաղ էլաւ,
Հինգ օր՝ վեց օրէն կերած էր։
Ինձի կանչեց Ղազարապատն

1 և 2. Ամենայն տանց վերջաւորն կրկնեա՛ այսոսէն տողը։

Գեղարդակիր վարդապետն·
Աղաչանք արաւ Ենօքեանն,
Որ չ՚տամ արզա՝ իմ Մօզի։
    Վանքի բոլոր միաբանն
Չիմանայ էս անբաղդ բանն,
Լսելով Սրբազանն,
Չգտայ իմ Մօզի ջանն։
    Վեր կացայ՝ հէրանից գնացի,
Տասներկու օր այնտեղ մնացի·
Աներս մէկ Մօզի տըւուց,
Անկապ յառաջս քցեցի։
    Իմ քեօր՝ անբախտ իկբալս իմացէք·
Աչքս բացի, հայր չի՛ տեսայ·
Քաշեցի էս նեղ դարդերն,
Քամակիս եղբայր չի՛ տեսայ։
    Աներս մէկ Մօզի տըւուց,
Էն էլ բերի՝ խէյր չի՛ տեսայ,
Վերջն էլաւ յէջմիածին
Դաբբաղներին փա՛յ՝ իմ Մօզի։
    Քեզի Թոզին սոված՝ ծարաւ,
Քո դարդերդ սիրտս առաւ
Ցովհաննէսն Թարիֆդ արաւ,
Որ առնեմ քեզ չահ՝ իմ Մօզի։
    Աղա Գրիգորի տանն
Տէր Ղազարն խօսք բացաւ·
Ասացի Մօզու դաստանն,
Շատ մարդ անդ ուրախացաւ·
Պըլուզի բիդովլաթն
Մի Թունգի գինի խոստացաւ,
Էն էլ վերջն սուտ դուրս եկաւ։
    Կարապետն էր խելքի բունն,
Քանդուսի քո տանողի տունն·

Բերին տասներկու մինալթունն,
Որ առնեմ քեզ թայ՝ իմ Մօզի·
Կանչեցի· հարա՜յ իմ Մօզի,
Ճակատդ ղաշկա իմ Մօզի։

Սարադէր։

## Ի տենչայ Հայաստանէ։

Գահըս փղոսկրեայ էր, ադամանդէն զարդարած,
Թագըս կ՚արժէր աշխարհքն, խոշոր մարգարտէ կարած,
Գոյխանըս Եբենոս, խոր Ափրիկայից բերած,
Սուրըս ընտիր պողպատից, Թիլսիմի ջրով ջրած,
Պալատներըս մարմարեայ, ոսկեզօծ՝ լայնատարած,
Գաստաստանատներըս՝ իբրև ժամացոյց լարած,
Հարկըս՝ ռամկաց միջին անաչառ հաւասարած,
Գանձատանըս պարտիքը ժամանակին վճարած,
Բանակներիս կարգերը իմաստութեամբ յարմարած,
Թշնամեացըս ամէն տեղ քաջութեամբ յաղթահարած,
Յանկարծ տեսի աղիքս Թունաւորած՝ գալարած,
Բժիշկ չի մնաց՝ հարցրի, չիմացան ցաւիս դեղն,
Ասացին· անծանօթ է մեզ դորա սեռն ու ցեղն։

Մինչ երիտասարդ էի, ես էի փառքն աշխարհի,
Շատ տէրութիւնք հարկ տուին իմ զօրաց բազում տարի,
Ոմանց գահ և թագ տուի յատկութեամբ բարերարի,
Աշխարհիս մէջ երկու էր, կամ երեք՝ իմ համարի,
Խաչապաշտ դրացեացըս՝ նման անմիտ յիմարի
Հաւատալով՝ յուսացայ, գլուխըս կոյս քարի,
Իւրաքանչիւրըն կամեց ինձ որդայթ հնարի,
Խաբելով՝ իշխաններիս ձգեցին իւրեանց չարի.
Ո՞վ է կարող նախատես լինիլ պատրանաց չարի,
Որդիքըս զիս ուրացան, յոյս կապեցին օտարի,

Վերջն ցիրուցան եղե՛ն՝ զէտ անհովիւ պաճարք,
Անհաւատարմութիւնն է արատութեանց արդեղն,
Նոյլաւ յոյժ չուտ կ'խաբուին միամիտն ու անմեղն։
Այլազգիք՝ տեսանելով մեր անհամաձայնութիւնն,
Քրիստոնէից ունեցած սիրոյ ունայնութիւնն,
Մոլեգնաբար խզեցին ազգիս փրկութեան սիւնն,
Հիմնայատակ արարին վանքերիս շինութիւնն,
Քաղաքներըս մոռացան նախնական խնդութիւնն,
Իմ յոյսըս միայն մնաց Սիւնեաց ամուր անկիւնն,
Նրան էլ խախտեց՝ ցրեց Պարսկաց չընութիւնն,
Ամենևին ջնջեցին ազգիս արտօնութիւնն,
Բարւոյ նշան չի՛ պահիլ անհաստատ բնութիւնն,
Փառքն կորած մարդոյ ի՞նչ շահ է երկմտութիւնն,
Միմիայն դեղն է նորա ուսմունքն ու գիտութիւնն,
Անարգութիւնն է յատուկ թշուառ վիճակի նեղն,
Դժբաղդութեամբ կ'հալուի զգացող սրտի եղն։
Երբ որ ձեռքըս գնաց գահ, գայիտն և թագըս,
Աղօտացաւ լուսինըս, խաւարեց արեգակըս,
Գանձատունըս դատարկուեց, թեթևացաւ քսակըս,
Սև փողով անհող չեղև արքայաշուք մուրհակըս,
Քաղցելով՝ հացի տուի ականակուռ կոճակըս,
Ատենադպիրներըս գողացան հաշիւ՝ ցուցակըս,
Խռովեալ առարկայ եղև քաղցրանուագ սոխակըս,
Թշուառութեան չափն էանց կորստական վիճակըս,
Անրան խոտոյ նմանեցաւ կենսատու մանուշակըս,
Արքայուհիս սիրածին բաշխեց քառամնեակըս,
Ընտանիքս լքեցան, աչքերս անկաւ դըդակըս,
'Կորստական տափանց կ'փախնու միշտ ուշեղն,
Շատ տէրութիւնք կործանեց անզգամ կանանց դեղն։
Ո՛վ որ ետես զիս տկար, ինձ վերայ փորձեց սուրըն,
Հպատակքս ցրուեցան, խափանուեց առուտուրըն,
Պտուղք դրախտին դառնացան, անհամեց քաղցր ջուրըն,

Ի մէջն ազգիս մեքենայ չարեաց դարձաւ համբոյրըն,
Մի՛նչ ցայսօր էլ չի՛ չիջէլ ատելութեան վառ հուրըն,
Ա՛զգըս իրան աւերեց, և ո՛չ թէ Լանգ-Թէյմուրըն,
Հազար ցնծութիւն տեսնի՝ էլ չի՛ գնալ տըխուրըն.
Ի՛նքն իրան սևացրուց՝ ո՛չ թէ օտարաց մուրըն,
Ի՛նչ պատահի՝ արժան է, ես ի՞նչպէս ասեմ զուրըն,
Մեռ՚լի տէրն ո՞նց կուտէ իւր մեռ՚լի կերակուրըն,
Ծառայական կերպարից լաւ է ազատ նաշուրըն,
Սէյեադ, խմ՛, անզօրին միշտ կ'յաղթէ ուժեղն,
Նետն ե՞րբ վնաս կ'տայ՝ մի՛նչ չի՛ լինի աղեղն։

Սէյեադ։

## Առ անգուն արծաթոյ։

Ինձանից ի՞նչ տեսար, կամ ի՞նչ լսեցիր,
Որ խսպառ հեռացար, պատուական արծաթ.
Ի՞նչ միջոց ճարեցիր, ի՞նչ սկսեցիր,
Կամ ո՞ւր գտար անգութ քեզ նման արծաթ։
Ահա՛ քսան ու եօթն տարիս լրացաւ,
Քսան տարին ամբողջ քեզ ետու գլխաւ,
Երբեմն բաղմաշխատ, երբեմն ծարաւ՝
Եղէ անմիտ սիրոյդ սիրաբան, արծաթ։
Եթէ դո՛ւ ես բաղդն, ասա՛, քեզ գովեմ.
Դու ո՞վ ես, վասն զի գիտեմ՝ ես ո՛վ եմ.
Թէ ո՛րքան ձեզանով ես ապահով եմ,
Ձեզ գովութեան արժէք տամ այնքան՝ արծաթ։
Չէ՝ չէ, դու բաղդն չես, նորան մօտ բան ես,
Կարծիքով քեռորդի, մօտ ազգական ես.
Դու քեռուցդ աւելի փախստական ես,
Երկուսդ էլ մէկմէկու համանման, արծաթ։
Ո՜հ, սէրդ ո՛րքան առատ, ո՛րքան ահագին,

Որ ունէր անթերի կուսութեան սրտին·
Արժէք համարելով զքեզ քո Արարչին,
Միասին ստացայք անարգանք՝ արծաթ։

Ա՜խ, ի՛նչ ասեմ· շատ անբախտ ես, անիրաւ·
Գրաւներիդ մինչ ե՞րբ յաղթես, անիրաւ·
Անհարազատ և ապերախտ ես, անիրաւ·
Այսօր ինձ մօտ, էգուց այլոց տան արծաթ։

Տո՛ւր իմ վերոյիշեալ քսան տարին, տո՛ւր,
Կամ քո ինձ խոստացած առատ բարին, տո՛ւր.
Տա՛ր այս իմ գանգատն սաղ աշխարհին տո՛ւր,
Տե՛ս՝ որի՞ս կ՚անուանեն անպիտան, արծաթ։

Մէկ անտիքա զոխ հազար տարեկան,
Պատկերն անվնաս, գիրն անխափան·
Իսկ յայն տեղին տեսի մէկ հատ գերեզման,
Չունէր ինչ ազդարար մէկ նշան, արծաթ։

Հիմա, եղբա՛յր, ես մարդ մահուան ենթակայ,
Իսկ դու տարով լցուած ամէն կէտ ներկայ·
Քո խնամութիւնդ մինչև որ ինձ գայ,
Իմ թոռս կ՚ստանայ թոռ իրան, արծաթ։

Քո մէկդ ինձ մօտ երկու չի՛ գալու,
Ձեռքս ո՛ւմ որ տալու, կրկին յետ չ՚առու·
Մէկն աշխատելով, վազելով մեռաւ,
Մէկին յանկարծ տուիր ստախճան, արծաթ։

Տօ անհոգի՝ անգո՛ւթ, քանի՞ մի քանի·
Արի՛, ինձ էլ քեզ բարեկամ անուանի·
Ե՛կ, այս ստացուածոյս հետ միաբանի,
Ո՛չ դու մնայ անմարդ, ո՛չ ես - անարծաթ։

Կանչէ՛ իմ դրացին, գոչէ՛ իմ տունս,
Քննելով ստուգէ՛ ողջ կեցութիւնս·
Թէ կարեն վկայել շռայլութիւնս,
Թո՛ղ՝ քոյ տեղակ ինձ պատասխան տան, արծաթ։

Երանի, թէ լսելիքդ բանայիր,

Դու էլ ինձ պատասխանի տալ ջանայիր·
Թէ Շիրինին հաւատարիմ մնայիր,
Ունէիր դու դրուատ՝ գովասան, արծաթ։

Ս.ՀՐԿ Շ.ԷՐԷՆ։

## Տրտունջ։

1

Իմ սրտիս աղ ես արել,
Ջիգեարս դաղ ես արել.
Ինձանից հեռացել ես,
Ինձ բիզամաղ ես արել։

2

Դու ես իմ սիրահարը,
Քաշքա տանեմ քու չարը.
Ինձ խօմ քաշել չես դարը,
Ամմա նասաղ ես արել։

3

Հաա մարդկանց ես խաբել,
Սիրտդ ես եմ տապտապել.
Ինձ խօմ Թոկով չես կապել,
Ամմա դուսթաղ ես արել։

4

Ես եմ աղիզ աղբերդ,
Ինձնից մի կտրիլ սէրդ.
Օխ ու քեաման ունքերդ,
Ինձ վերայ Թաղ ես արել։

5

Կանչումեմ, մօտ չես գալիս,
Արեան աչօք եմ լալիս.
Աչքերդ լոյս է տալիս,
Նոր չամ-չիրաղ ես արել։

6

Կարօտդ քաշումեմ քու,
Չեմ կարում ասել աչու.
Կերպարանքդ տեսնելու
Ինձ էլ մուշթաղ ես արել։

7

Մինա բօյըդ սուրահի,
Խորաբա սիրտս շահի,
Ինձ էլ տար՝ մօտդ պահի,
Բաւ է, ղրաղ ես արել։

8

Ես քո սիրոյդ, բարեկամ,
Կամենումեմ հոգիս տամ.
Պռօշներդ քաղցրահամ
Թուղթից չարմաղ ես արել։

9

Բոխալոդ բիլուրի պէս,
Հաֆղ է տալիս հուլի պէս,
Դէմքդ բացուած գուլի պէս,
Խալերդ չաղ ես արել։

10

Մուրվաթ արա, սիրահար,
Մի չարչարիլ չարաչար.
Ինձ քցել ես քարէքար,
Դըրուստ սարսաղ ես արել։

11

Մ՚ատներդ կակող մում ա,
Դեռ եփուած չի՛, հում ա.
Տեմնողն հէնց գլտումայ
Ինձ էլ չըրադ ես արել:

12

Այսօր լռեցի հանգդ,
Խիստ տեղին են նշանքդ.
Ըննման կերպարանքդ
Նոր զաւվարադ ես արել:

13

Սիրելի, դատել ես,
Ատել ես, նախատել ես.
Ջիկեարս կտրատել ես,
Արնաշաղաղ ես արել:

14

Համ օրդակ ես, համ ղադ ես,
Դուսմթի մօտ փլյանդադ ես.
Դու այնքան այեարբադ ես,
Լացս ծիծաղ ես արել.

15

Ինձ տեսնելիս տուր բարով,
Խորհուրդդ տա՛ դրով.
Ինձ խօմ մուրթել չես սրով,
Անսուր մատաղ ես արել:

16

Դու միշտ կամեցիր բարիս,
Ուրախանալ մի չարիս.
Էս քըրքըրուած ջիկեարիս
Քափալ արադ ես արել:

17

Դարդերս ասեմ ո՞ւմը,
Անոյշ ձեր կեր ու խումը.
Ծիծեռնակաբերդումը
Էն օրը հաղ ես արել:

18

Դու ես իմ սիրականս
Կտրել ես իմ ամանս,
Սաղ ու սալամաթ ջանս
Դարդ ու նաչաղ ես արել:

19

Ի՞նչ է, տա՛, իմ մեղը,
Հալուել է ոտոխս եղը.
Երկու ծըծլդ մէջ տեղը
Յաղչա ու բաղ ես արել:

20

Դու ես իմ սիրականս,
Մի՛ մաշիլ ջիւան ջանս.
Երեք տարվայ դուշմանս
Նոր օյեաղ ես արել:

21

Համ դուդի ես, համ լաչին,
Ես մայիլ եմ քու պաչին.
Դօսթ ու դուշմանի միջին
Դու ինձ լաղ ես արել:

22

Ականջ դի՛ր խօսքիս լուսին,
Քեզնից չի՛ կտրվիլ դաւին.
Բիչարա Գիւրջի-Նաւ՚ին
Մադեամ ախմա՞ղ ես արել:

Գիւրջի-՚Նաւէ:

# Երգ։

Ամէն միտս ընկնելով էն եարս իմ,
Կորցնումեմ դօղրու ճանապարհս իմ,
Թալահ չունեմ, ծովս ընկաւ քարս իմ,
Ախ քաշելով՝ կտրատվեց ջիկեարս իմ,
Աստուած սիրես ի՞նչպէս կուլի ճարս իմ։

Նշխի մէջն ընկնող կուլի ծուխի պէս,
Թէկուզ աշխարհք անի կեր ու խումի պէս,
Վառվեցի՝ հալւեցի Թափած մումի պէս,
Ջրերի հետ խառնըւեցի ղումի պէս,
Ջունուն Վարդան աշըղի Մաջնունի պէս
Լէյլու համար մաշ եմ գալիս սարս իմ։

Թահր ա տուել՝ շուխ բօյիդ սումբուլ կասեն,
Փայլումէ ջամալդ ծովի հուլ կասեն,
Ձանիդ տակին Թուշ չե՛ն տեսել, կուլ կասեն,
Որ դուանդ կանգնեմ՝ ինձի ղուլ կասեն,
Վարդի կարօտ մայիսվայ բլուլբուլ կասեն,
Գիշեր՝ ցերեկ չի՛ գալիս ղարարս իմ։

Հոգէն մօտիկ մին ադալաԹ խան կուզեմ,
Օրինաւոր վճռող դիւան կուզեմ,
Ես հաղաղս եարս ինձի տան՝ կուզեմ,
Եարիս հետ քէփ անելու սաղ ջան կուզեմ,
Ես աշխարհումս մին լաւ սիրական կուզեմ,
Անսիրական ի՞նչ կանեմ աշխարհս իմ։

Ողորմի մեռնողներուն, ապրին էլ սաղերը,
Գարունք բացուի՝ դասով գնանք բաղերը,
Կանաչ տեղը մորԹենք գառի չաղերը,
Արնով լինի մանուշակի Թաղերը,
Միխկին-Բուրջին ասումայ էս հաղերը,
Ձէք հաւատում՝ կարդացէք դաւԹարս իմ։

Միւքէն-Բուրջէ։

## Գուլստան:

Էյ նոր սիրելի, նաղանի խանում,
Հատդ չի՛ գտնուիլ քուլլու Իրանում.
Դուն հրեշտակի ես յատուկ նմանում,
Քեզ տեսնելիս, խօշ, մարդ է հաղ անում,
Կեանքը քանդումես, հոգին ես հանում,
Ուշքը թափումես, խելքն ես տանում,
Ջահմով խօսալուդ մարդ ես սղանում,
Ինքդ՝ քեզնի ու քեզ՝ ռահմ չե՛ս անում,
Արարմունքիդ աշխարհքն է հիանում,
Էյ զուլումքեար, մուրվաթ չես անում:
Թարմատի նիգա՛ր՝ ջրղալէ թավուս,
Աչքերդ է Հնդկաստանայ ջավուղ,
Բաբաթ ու բաբաթ հաղնուել ես եա՛ղուղ,
Թափել ես սինայիդ վերայ եալդուզ,
Բարով հասանեմք բէհար ու նովրուզ,
Շինեմ քեզ համար գիւլաբի հովուզ,
Սօնայի պէս լեղ տուր, դուրս արի թամուզ,
Ման արի ճօճալով, կրակէ հան դուրս,
Բաղչի գիւլիշան ես, Սաքինա խանում:
Կերպդ նման է շամս ու ղամարին,
Վաւվելայ վրեդ Ջոհալ Մուշտարին,
Թո՛ղ աչքս մնիկ տայ, եա՛ր, քո ղարին,
Ե՛րբ աչքս անկաւ քո լոյս պատկերին,
Զարմանայ, կու հիանայ քո թահրին,
Խելքս թափ տուեց ունքիդ կամարին,
Ճոնդէն ցցուեցիր սրտիս տամարին,
Գիշեր ու ցերեկ թափումեմ արին,
Ինչ ռաստ եմ եկել էս դարդ ու սարին,
Չես հարցանում, թէ ո՞նց ես դիմանում:
Էդ քո թարիֆն մէկ հրաշք բան ա,

Քեզնէն կու փախչի դէն ու սատանայ,
Յատուկ մնած մարդ որ քեզ մօտանայ,
Շունչ կու առնի, անդամքն կու կենդանանայ,
Ինդ էլ մէկ ուրիշ ջուաս նշան ա,
Թաքչի Թումար եւ Հաջիթարխանայ,
Ո՛վ որ քեզ տեսանի, չատ կուրախանայ,
Ալովչին նաֆարդ է անում:

Մայիլ մնացի քեզ պէս մահբուբին,
Մաղու՛լ փաքիզա՝ ջանան ու խուբին,
Աշխարհք մաթ արիր քո հուբ ու Թաբին,
Ջանդի բերիր դու երկրի Սահաբին,
Իլահի Հաշտարխանայ Նայիբին,
Ե՛կ, ռահմ արա Թուրինջ զարիբին,
Բարով հասանես էդ քո մատթաբին,
Խեղճին մի՛ ձգիր էշխիդ զուլբաթին,
Ալովչին նաֆարդ է անում:

Թուրինջ:

## Նոր սիրեկանն:

Արի՛, իմ եարս, արի՛,
Իլլաճ ու ճարս, արի՛.
Կարօտել եմ քո տեսոյդ,
Իմ բաֆադարս, արի՛:

Դու սիրական՝ ջանան ես,
Դու մարդոյ ջան կու հանես.
Դու ե՞ր չամ ու խամ կանես,
Դու մի՛ նազ անիլ, արի՛:

Դու հարցրու իմ հալը,
Դու իմ դովլաթ ու մալը.
Դու՝ քո անուշ պաչ տալը,
Քաղցր նազանի, արի՛:

Դու կանաչ խնկի ծառ ես,
Դու քան լուսին պայծառ ես.
Դու իմաստուն՝ ճարտար ես,
Ճարտար նազանի, արի՛:

Դու լինձնից հեռանումես,
Հէնց դխտեմ մոռանումես.
Դու անհման խանում ես,
Խանում նազանի, արի՛:

Դու նման չամս ու զամար,
Աչքդ չաղ՝ ունքդ կամար.
Ես երվումեմ քեզ համար,
Արի՛, հոգի ջան արի՛:

Դուն ու քո պատատանը, Դու մի գնալ տանիցը,
Քեզ ղուրբան ա իմ ջանը. Զանք դամ գիւանխանիցը.
Օքմին չի կայ մեր տանը, Ախ (Փլան) ջանիցը,
Իմ սիրականս, արի։ Կարօտ նազանիս, արի։

. . . .

## Ի դէմաց Եւրոպականչւոր Հայաստանոյ։

Մեր ամպն այնքան թանձր է, որ ամէն հողմ վանել չէ կարող.
Մեր ցաւը ամենայն բժիշկ լաւ պարզաբանել չէ կարող.
Ոչինչ վիճակ վատթարութեամբ մերին հասանել չէ կարող.
Մեր հացի մէջ աղ չկայ, ով ուտէ՝ մեզ փոխս կըտայ,
Նոյն պատճառի համար զմեզ ոչ ոք այպանել չէ կարող։

Ով որ պատմութեան ծանօթ է՝ նա գիտէ մեր քաշած ցաւըն,
Պատմագիրք մեզ խնայելով՝ պատմել են նորա տակաւըն.
Ոչ ոք չուզեց ալեաց ձեռքից օգնել՝ ազատել մեր նաւըն,
Ոչինչ որտեղ Հայոց օգուտ՝ ոչ ողորմութիւն կայ, ոչ գութ,
Անբաղդութեան բեռը ոչ ոք մեզ նման տանել չէ կարող։

Քրիստոնեայք աւերեցին մեզ՝ ոչ թէ անօրէններն,
Անօրէնն չէր հասկանում մեր Քրիստոսի սուրբ պատուէրն,
Որ ասում է. ձեր անձանց պէս սիրեցէք՝ ձեր ընկերն.
Ով որ փոխս է խեղճ Հային՝ նա իսկ պատկեր է Յուդային,
Նորա հոգին դժոխքիցն երբէք ելանել չէ կարող։

Հայ չի տեսայ, որ սրտի մէջ սառուցեալ արիւն չունենայ,
Յայտնի բան է՝ արիւն կուլի այն սիրտն, որ սիւն չունենայ,
Թշուառութեան մէջ կունենայ՝ ինչ մարդ գլուխն չունենայ.
Հանգամանքից նկատումեմ՝ հառաչելով վհատումեմ,
Ոչինչ աւելի այս վիճակից մեզ շուտ բաժանել չէ կարող։

Մեր ազգի ցաւն եմ արտասւում առանց այլոց վրան ասելոյ,
Մեր խելքից եմ գանգատ անում, որ արժան է բամբասելոյ,
Կեանքիս շատն անց է կացել, եւ յոյս չունիմ ապասելոյ

Համայն Հայոց երջանկութեան, որ հիմն է սրտիս ցանկութեան,
Սէյեադին Ճշմարտի համար ոչ ոք սպանել չէ կարող։

Սէյէաթ։

## Բուլբուլ և Վարդ։

Բուլբուլ, քո նման՝ քեզ վերայ փափագ չ'ունի վարդը,
Սէր վայելելոյ մի՞թէ ժամանակ չ'ունի վարդը.
Չէ՛ որ նորա անունդ նորա հետ պատմողը մեք եմք,
Դարձեալ գլխումեմք, որ սիրոյ մուրհակ չ'ունի վարդը։
Քոյ վարդուհիդ՝ իմ բաղդիցս՝ անգութ է, ո՛վ անճար,
Իմ սիրականիս չափ խնամ անքակ չ'ունի վարդը.
Իւր ծառն փշալից, հովանին անգամ օձանիստ,
Իւր արիւնն բուն իւր մէջն խոտակ չ'ունի վարդը։
Թէև Մայիսի ծնունդ է, բայց Յունուարաշունչ է,
Ամպով է պատած, երբէք արեգակ չ'ունի վարդը.
Թէ մարթ է սիրել, համոփխուլին սիրէ բացարձակ,
Որովհետև անանցանելի վիճակ չ'ունի վարդը։
Տան և մէկ ամիսդ դու նորան ծախումես անշուշտ,
Բայց քոյ մէկ օրդ առնելոյ ստակ չ'ունի վարդը.
Վարդեցն, Շիրին, պատմէ՛ սոխակին՝ քանի՛ որ կաս,
Եւ կրկնէ՛, ասելով թէ՝ հեղինակ չ'ունի վարդը։

$18\frac{31}{5}56$. յԵրևան։ Մ. Ղէք Շէրէն։

## Ողջոյն հրաժարական։

Մնացէք հազար բարով, գնումեմ ատէն, սիրական,
Ոչ ոք գանգատ չ'գրի ինձպէս նուաստէն, սիրական։
'Մի բերեմ՝ խելքս կերթայ՝ մազերիդ դաստէն, սիրական,
Կու ցնծայ՝ ո՛վ տեսանէ վարդերիդ նախշատէն, սիրական.
Քանի՛ անձինք 'քոյ սիրոյդ անխմել մաշթ են, սիրական։

Հեռանումեմ քեզանից, միշտ կու մնամ ախ քաշելով·
Վերջն անձնիս մահ կու բերի սերդ՝ ջիկեարս խաշելով·
Աչքերս պէտ կուրնայ, մեկ Նամակիդ Թամաշելով,
Կու մնամ օտար տեղն տեսութեանդ վաշվաշելով·
Չեմ ուզում հեռանալը, վախումեմ սաատէն, սիրական։

Հեռանալը դժուար է, մնացողաց միշտ երանի·
Հայրենիքն քաղցր կուլի, Արարիչն անէ արժանի·
Սէրն մի այնպէս բան է, առանց օրհասս մարդ կ'սպանի·
Սիրածը 'միտ բերելով՝ կուգէ դաշտերն անկանի·
Կցորդէ սէրդ սիրոյս, դու լե՛ր իմ չաատէն, սիրական։

Ասելով՝ օտար տեղն, ո՞վ կու լոէ իմ գանգատը·
'Սեր անկաւ՝ Ասլու համար՝ կրակվեց խեղճ Քեարամդադը·
Իւր անձը մահու տուեց՝ Շիրինի համար՝ Ֆահրադը,
Մշտապէս էր սիրահար՝ Սադաթի հետ՝ Սէյեադը·
Լէյլին էր ուրախ դիմօք, Մէջնունն էր խասթէն, սիրական։

Երանի՜ է աչացս, քեզնէ մեկ բարև տանում·
Այս ցաւն է անտանելի, խեղճ օտարս ո՞նց դիմանամ·
Գիշեր՝ ցերեկ, սիրահար, տեսութեանդ միշտ կու ջանամ,
'Սիրոյդ փակեալ խորհուրդս, ինձ երանի՜ կըլնի, բանամ·
Խօսքերդ մարդասպան իմ անձնիս ղաստ են, սիրական։

Երանի՜, արժանի լինէր սիրականին իւր սիրածն,
Սէրը կցորդէր սիրոյն միշտ երկնային Աղորմածն,
Ո՞նց կուլի խնդացող օտար տեղերում արտմածն·
Մարդ պէտք է որ քաշի իւր ճակատի գրածն·
Չարախօս մարդիկ ամէն տե՛ղ բարաստ են, սիրական։

Սիրելոյ սիրելույն հեռանալն շատ դժուար է·
Սէրն մի վատ կրակ է՝ չի՛ հովանալ՝ անհնար է·
Հիւանդանամ 'քոյ սիրոյդ, իմ դարմանս ո՞վ կ'ճարէ։
Խղճալի Գիւլզէր-Խանըմն այլ բախտ չունի 'սիրահարէ·
Թևերամիս պատանիքն ողջ անխնամ են, սիրական։

Գիւլզէր-Խանըմ։

# Երգ։

Էշխիցդ ջունուն դառած, գիշեր՝ ցերեկ հաղ եմ ասում,
Ո՛չ թէ երեկ ու այսօր՝ կարելի է վաղ եմ ասում,
Ծոցինդ չեմ ճանաչում՝ մանիշակի թաղ եմ ասում,
Երեսիդ երկու պաչին՝ ինձ արա ղօնաղ եմ ասում,
Անուշիկ՝ անխմել իմ քէֆս արա չաղ եմ ասում։
Իդ քու սէրդ դառելայ իմ ջանումս փուշի նման,
Ինդուր որ էլ չեմ ճարում քու լալաղար թուշի նման,
Խօսալդ բիւլբիւլի պէս՝ կերպդ թութուխ ղուշի նման,
Ամէն թաչրդ տեսնելուս՝ դառնումեմ աշխուժի նման,
Արի, սիրտս մի՛ չինիլ քարին դիպած շուշի նման,
Ջահա արա, կոտրածները կոծկի՝ չինի սաղ եմ ասում։
Եթէ որ դարդիմանդ ես՝ արի ինձ անճար մի թողալ,
Դօվլթ ու դուշմանի միջին՝ վարդից ընկած խար մի թողալ,
Ձեռքիցս բռնի՝ քաշի դու ինձ դէպի մօտդ տար, մի՛ թողալ,
Մինչի ժահս՝ մեռնիլս սրտիս ինթիզար մի՛ թողալ,
Թէ փիս եմ, տա՛ր գլխովս՝ էլ քու կըշտիդ քար մի թողալ,
Թէ լաւ եմ, խօսքդ ի՞նչ ա՝ տա՛ր ծըծեմ բուխաղդ եմ ասում։
Եա՛ ես մի քամի պիտի՝ ծամդ փարիշան'ի արել.
Եա՛ ես մի Սէյեադ պիտի՝ թուռումս թառլան'ի արել,
Եա՛ ես մի Լէկզի պիտի՝ տեղդ Դաղստան'ի արել,
Եա՛ ես մի տէրդ պիտի՝ չորս կողմդ նշան'ի արել;
Եա՛ ես մի պառն պիտի՝ ջանս քեզ ղուրբան'ի արել,
Իշէլի տոխդ տակին ընդունելի մատաղ եմ ասում։
Ինձ ումուդ ուն'ի, որ իմ արղէս անց կենայ քարումը,
Ի՞նչ կանես, ղըփըլըանդ ա ընկել բէմուրվաթ եարումը,
Ո՛չ նա ռահմ է անում, ո՛չ ծախումեն բաղարումը,
Ես ի՛նչպէս այսուհետև ուրախանամ աշխարհումը,
Թուլին հազար ութ հարիւր երեսուն երեք տարումը,
Դանջեցի Միսկին-Բուրջին եմ ես՝ խօսքս Ղարաբաղ եմ ասում։

Մէսքին-Բուրջի։

## Նոր սէրաշանն։

Թէ կամենաս՝ մէկ սուր առ, արեւուդ մատաղ,
Իմ գլուխս կտրի՛, տա՛ր արեւուդ մատաղ,
Մէկ բան ասեմ՝ լսի՛ր, եա՛ր, արեւուդ մատաղ,
Բիւլբիւլի պէս կուլամ, խա՛ր, արեւուդ մատաղ,
Մի՛ թողուլ ղօնչէդ քաղեն, ծա՛ռ, արեւուդ մատաղ,
Ինձ մի՛ թողուլ վարդէդ զա՛ր, արեւուդ մատաղ։

Թուրլու թուրլու դարդեր սրտիս մէջն լցուած,
Երվելոյ եմ ջիկեարս, մնացել է խոցուած,
Լեարդ ու թոքիս վերայ եարաներ է բացուած,
Չէնց գիտեմ՝ թէ սուր սուր խանչալներ է ցցուած,
Էս ցաւն ինձ կու տանի, ճա՛ր, արեւուդ մատաղ։

Ղո՛ւլ եմ դառել ես քեզ, մնացել եմ փաղիր,
Քանի՛ որ կենդանի եմ՝ ուրախ կացի՛ր ու խաղի՛ր,
Ես մեռնելուց յետոյ - վարսերդ վրէս չարի՛ր,
Տա՛ր՝ դի՛ր ինձ 'գերեզման, քո ձեռովդ թաղի՛ր,
Քաշի՛ վրէս նշան քա՛ր, արեւուդ մատաղ։

Աչքս մնաց ձեռիդ կարմիր վարդի փնջին,
Բիւլբիւլի պէս լալով 'ի դէմ վարդիդ ղօնչին,
Ամաչումեմ՝ խօսեմ. խեղճին՝ ինձպէս մնջին
Հարդիղ դու չես հարցանում էդ քո ծառայ Թուրինջին,
Ինձ թեղով մի ճար, եա՛ր, երեւուդ մատաղ։

Թուրինջ։

---

Զուար Օղուլ, Տարան Օղուլ[1],
Սանէ գէօրթում, եանըդըմ Օղուլ[2]։

Ես Զուլօն եմ Մասարեցի,
Չինգ օր արի՛, մեր տուն կեցի՛,
Դէմ աղօթրան եկեղեցի։

---

1 և 2. Ռամկային տանց վէրջուքն հրէնէ՛ ղոյսուէն տաղ։

Արևն ելաւ կամար կամար,
Ջուլօն կապեց ոսկէ քամար,
Քեզի բերեմ ջանիս համար։

Արևն ընկաւ Խամուր բերդին,
Քո սէրն ընկաւ մէջ իմ լերդին,
Ես քեզ սիրեմ, թո՛ղ զիս քերթին։

Տան քով անցայ, Ճրագն էր վառ,
Դու նման ես զօզանի զառ,
Որբևերցի, արի՛ զիս առ։

Ջաղցի բոլոր ըմէն ուռ էր,
Աշխարհն աւէր· Ջուլօն ծուռ էր,
Մէջ իմ սրտին ղ՛ալ ու դուրր էր։

Թունտիր վառեր՝ եղեր է մուխ,
Կապեր փուշին՝ թարգելայ պուխ,
Ունքերդ կամար՝ աչքերդ թուխ։

Օր մը աղէկ՝ օր մը վատ էր,
Կանաչ գլուխ չօլի բադ էր,
Ի՛նչի խօսքով զիս կուտաէր։

Տան քով անցայ՝ թափ քըլեցի,
Լանգով զարկի՝ զերդիկ բացի,
Եա՛րս տուն չէ՛ր, նստայ՝ լացի։

Թառ խորոտիկ աւլի զաղա՛,
Քո դարդ մէջ իմ սրտին շա՛տ ա,
Քո ծոցն ընձի նաշխուն օդա։

Մեր տան յետև արտ մի եօնջայ,
Թխեմ դալթա, Ճամբեմ խօնչայ,
Առնեմ Ջուլօն, շրջեմ Գեանջայ։

Ղատ խորոտիկ անմահութիւն,
Սիրելիս, մէ՛ ըներ վատութիւն,
Թողեմ՝ երթամ ղարիպութիւն։

Դու կաննել ես դէմ ամրոցին,
Ջուխտակ շամամ մէջ քո ծոցին,

Դու կ'խաղաս խետ վըզնոցին։

Մեր տան յետև ջուխտ մ'դերան,
Բոլոր երես՝ պստիկ բերան,
Քո սիրողիդ դուներ վերան։
Մեր տան յետև սրտ մ'դարի,
Երթանք՝ քաղենք, տանք խիարի,
Ճամբեմ Ջուլֆին դխարի։

Պաղ ջուր պըծել՝ կուգայ սարէն,
Դեռ չի՞ սաղցեր սրտիդ եարէն,
Ես ի՞նչ անեմ զիմ քեօր սիթարէն։
Ջուրն է պըծել՝ կու գայ սարէն,
Կու գըլգըլայ մարմար քարէն,
Եարն է դարձել իր իղըրարէն։

Ջաֆար Աղի նշխուն օղէն,
Նոր եմ ելել Ջուլֆի մօտէն,
Չեմ կշտացել անոյշ հոտէն։
Նշխուն օղա՝ չինի քեասայ,
Հանէլին, դնա՛, Թաքուն սա՛տ,
Էսօր ես Ջուլֆին Թադնայ տեսայ։

Դու ելել ես՝ կ'երթաս 'ի բէր,
Ոչ բէրն ըլի, ո՛չ բէրատէր,
Տօ՛ պստիկ հարս, Նոր սիրոյ տէր։
Դու ելեր ես՝ կերթաս իդին,
Դու ու քո ջուխտակ տեգեր կին,
Որն տեսնի՝ ելնի հոգին։

Քո մօր անուն կըսեն Սառայ,
Ես քո սիրոյդ կըրակ վառայ,
Ղըսմաթ չ'ելաւ՝ քեզնէ առայ։
Դու կաններ ես գարգեանհի գուռ,
Մէջքդ նմանի խանչալի բուռ,
Ջիս ըրեցիր սավդա ու ծուռ։

Աչկերն եղեր բուլթա բուլթա,

Զուլօն կապեր բալոք փուլթա,
Ես քեզ սիրեմ՝ Թո՛ղ ըսեն ուտ ա:
Տնէն ելար հոլա հուլա,
Ծիծերդ նմանի բամբկի քուլա,
Աչկունքս տեսան, սիրտս կուլայ:

Արաւօտուն բարի լուսուն,
Քու կոճկներդ հարիւր յիսուն,
Ես ղուրբան եմ էդ քու տեսուն:
Ջանունդ գիտեմ, ա՜խ, չեմ ասի,
Մանիշակ խառնուեր - հետ քու վարսի,
Ձեռս տարայ ծոցդ՝ խոցերդ հասի:

Ջանունդ եմ ասեր ղանաղան,
Իսկի չի՛ կայ քեզի նման,
Ծամերդ էր ճիւղ ճիւղ րէյհան:
Դու կու քելիս եանա՞ եանա՛,
Մէրկանդ ըսի՝ գուռը բանայ,
Ձիրար սիրենք՝ մարդ չիմանայ:

Մեր տուն ձեր տուն մէկ դառապով,
Ելնես՝ մտնես կանաչ կապով,
Ձիրար սիրենք Աստուածն ապով:
Դու ելեր ես՝ կերթաս Կանդառ,
Ծամերդ ուսերդ ելէ խանգար,
Ես քեզ սիրեմ՝ Թո՛ղ զարկեն չանկալ:

Մեր տուն ձեր տուն դիմաց դիմաց,
Հար ե՞րբ աչօք ըննեմ խմաց,
Մեր երեսի հայէն դնաց:
Աչխարհ՝ ալամ քեզ կու գովէն,
Որ մ'չելար սէլի հովէն,
Ծամերդ քաշած Վանայ ծովէն:

Մեր տան խաւ արա մ'մասուր,
Զուլօն առնեմ՝ մտնեմ մուր,
Զուլօն սիրեմ՝ Թորգեմ սէկասուր:

Հէլէլ վէլէլ Մսրու գոմէշ,
Իմ ձեռ թալեմ Քեալաշի փէշ,
Զուլօն եղնի ընձի փէշքէշ։

Մեր տան յետև արտ մ'ըլնդուկ,
Ձեր տան յետև արտ մ'ըլնդուկ,
Զուլօն առնեմ՝ մտնեմ սընդուկ։

Քամին եկաւ էրան էրան,
Գնաց հասաւ Մշու բերան,
Մշու հաւեր թեւաւորան,
Քեալաշի տուն սեւաւորան։

Մեր տան ետև քառսուն կարաս,
Քառսուն կարսի գինին էր խաս,
Ոսկէ գլուգլում՝ արծըլթէ թաս,
Ամէն թասին պագիկ մ'տաս։

Բուխարիկն եկայ՝ ցախ էրի,
Եափունջիս պատէն կախ էրի,
Մտայ ծոցդ՝ չիլթախ էրի,
Պագիկդ առայ, օխա՜յ էրի։

Զուխտ մ'գուլթան դաշտ կու բանի,
Զուլօ խաթուն խաց կու տանի,
Մին կու քելէ, մին կու կայնի,
Աչքով՝ ունքով մարդ կուսպանի։

Մեր տուն ձեր տուն մօտիկ մօտիկ,
Դու կապել ես կարմիր գօտիկ,
Երթանք՝ քաղենք կանաչ խոտիկ,
Տեսնունք՝ վի՞ր եարն է խորօտիկ։

Եկէք՝ երթանք դարի պոկենք,
Հայլի բերենք՝ գլուխ կոկենք,
Երթանք՝ Զուլօյի դրանը չոքենք,
Բալքեամ Զուլօն ընդեանից պոկենք։

Մեր տուն ձեր տուն երես երես,
Ապըսպարեմ՝ հայլիս բերես,

Արարիչ Աստուածդ սիրեմ,
Զուլցյիս անուն չ'ուխրեմ:
Մեր տան յետև տուն մի կարաս,
Ձեր տան յետև տուն մի կարաս,
Ամէն կարսի գինին էր խաս,
Ոսկէ գլուխիմ՝ էրծաթէ թաս,
Ամէն թասին պատ մը կուտաս:

. . . . . . .

## Տէ"էլ:

1

Անցեալ գիշերին երազում
Տեսի մեր Հայկ Նախահօրը.
Որ յԷջմիածին էր վազում
Ու Լուսաւորիչ Գրիգորը:

2

Երբ էհաս Տրդատայ դուռն,
Լուսաւորչին նստած տեսաւ,
Վզովը ձգեց իւր կուռն,
Երեսը պագել սկսաւ:

3

Լուսաւորիչն զարմացաւ,
Երբ որ ետես Հայկին ուրախ.
Երբէք պատճառը չիմացաւ,
Զի իւր ունքերին էր տրտում, կախ

4

Ասաց. տես, հայր Դիւցազին,
Ուրախութեանդ պատճառն,
Որ ցնծացուք 'ի միասին,
Զի իմ սիրտս է յոյժ դառն:

5

Պատասխանեց Նահապետն,
Թէ ուրախ եմ ո՛չ անպատճառ.
Մեր Նախահօր որդին Սէթն
Իմ այգայ մէջ ունէր մէկ ծառ:

6

Ջրհեղեղն այն խեղճ ծառին
Արարեալ էր արմատախիլ.
Բայց այս տարի Վարդավառին
Ոստք նոյն ծառոյ բերին տնկել:

7

Տեսեալ զայն ես խիստ հիացայ,
Զի չոր ծառն պտուղ տուաւ.
Ես այն պտղովը լիացայ,
Եւ յոյժ ուրախացայ նովաւ:

8

Զի եթէ չոր ծառոյն Աստուած
Ողորմութեամբ իւր անսահման
Պտղաբերութիւն է տուած,
Ո՞նց չի օգնիլ ազգիս սահման:

9

Լուսաւորիչն հարցրուց.
Մինչ ազգ քո 'ի ձեռն անկման՝
Իւր վիճակը չ'կորցրուց,
Որ կ'յուսաս կրկին կանգնման։

10

Նահապետն պատասխան ետ,
Թէ կ'յառնէ անկանողըն,
Թէև յիմար լինի՝ տգէտ,
Միայն չէ կանգնիլ մեռնողըն։

11

Ես տեսնումեմ որ ազգիս մէջ
Իմաստն Թանգ է քան փողըն.
Յառաջ քան զայս իմ ազգն հէչ
Չէր սիրել զիմաստ պտուղըն։

12

Երբ որ իմաստութեան սէրն
Մեկ ազգի միջին տարածուեց,
Իմացիր, երկնային Տէրն
Գթաց՝ նորա բաղդը բացուեց։

13

Քանի ժուկ է, որ ես գիտեմ՝
Չի ազգս իմաստ է սիրում.
Վասն որոյ յոյժ միամիտ եմ,
Որ սրտին ուսումն է տիրում։

14

Մինչ չես տեսնում քանի տեղ
Դպրոցներ, տպարաններ կան.
Նրանցանով շատ ազգ և ցեղ
Լուսաւորեալ՝ երջանկացան։

15

Տէ՛ս, ո՛նց զինի քանի ամաց
Քո լուսաւորած Հայերըդ,
Հաւատարիմ, երախտիմաց,
Մխա կ'բերեն քո վայերըդ։

16

Լուսաւորիչն Տաճարի
Մէջը տարաւ Նահապետին,
Ջուխտ չոքեցին 'ի վերայ քարի,
Աղաչեցին Արտագինին։

17

Թէ, Տէր, տուր դու ազգին Հայոց
Անքակտելի հաւատ, յոյս, սէր.
Սէյեադն եմ՝ 'ի Ձորն Վայոց
Դեռ չեմ տեսնում սիրոյ պատկեր։

Սէյէադ։

## Գտնգար ղուիրղնանէ։

Աչացս լոյս, ծառայդ մինչ երբ կրէ ցաւ անադան՝ անդուլթ.
Աղարըդ՝ քեզ հիմս պատմեմ՝ աչա դէմ յանդիման՝ անդուլթ.
Ցաւիմ, դարձնել ծիծղ կրկնեմ քեզ, անօէր սի՛րկան՝ անդուլթ.

Ես անզգայ սիրահարուած, դու խիստ ինքնահաւան՝ անգութ.
Եւայէն մինչեւ այսօր դեռ չէ՛ ծնուած քեզ նման անգութ 1.
Գնա՛ պտուղներուն այլոց վերայ կրկնէ՛ հրաման անգութ 2:
Սոխակն 'ի սկզբանէ վարդին սիրահարուած չէ՞ր արդեօք,
Արեւեան սէրն անշուշտ Թիրզային տուած չէ՞ր արդեօք,
Տելեմաքն այն Կատղկանէն վիրաւորուած չէ՞ր արդեօք,
Եւ ինձ դէմ այս աղեղն հուսկ յետոյ լարուած չէ՞ր արդեօք:
Քոյ կամքդ իմ կենցս յարմար՝ դու ինքնակամ չ'արիր երբէք:
Թէ իմ վէրքս, Թէ իմ վիշտս տեսար ու խնամ չ'արիր երբէք.
Դու անբախտիս համընթաց քեզ մինչ ցկեանս ժամ չ'արիր երբէք.
Տեսոյդ արժանի անարգս վայրկեան ինչ անգամ չ'արիր երբէք:
Գնա՛, զեփիւռ, բուրաստանէն զանէ մէկ լուր բեր անբախտիս.
Համատարած միջօրեայ լոյսն փոխարկուեց ստուեր անբախտիս.
Քոյ սէրն երբեւ մէկ անողորմ՝ աչարկու սուսեր անբախտիս.
Սիրաբորբոք Շիրինն եմ ես, ո՛վ է, գթած լեր անբախտիս:

$18 \frac{31}{5} 56$. [illegible]: [illegible]

Ս.— [illegible]:

Էս բաղեխս լոյս ծագեցար ինձ համար,
Իբրու արեւ ճառագեցար ինձ համար.
Էն ստեղծեց քեզ, սիրահար, ինձ համար,
Որպէս սոխակ ես քաղցրաբարբառ ինձ համար,
Աղաչումեմ, չ'լինիս օտար ինձ համար:
Եկ' եկ, սէր իմ, յոյժ խնդութիւնս դու ես,
'Մէջ աշխարհի ուրախութիւնս դու ես.
Ո՛չ որ չունիմ, զուարճութիւնս դու ես,
Ի՞նչ ա՛յլ ասեմ, կեանք՝ յարութիւնս դու ես,
Որպէս բժիշկ ես դեղ ու ճար ինձ համար:

1 եւ 2. Ս. [illegible]:

Զքեզ տեսի, յոյժ ցնծացայ, սիրելի.
Քեզնէ բարութիւն ստացայ, սիրելի.
Տրտում էի՝ ուրախացայ, սիրելի,
Մեռեալ էի՝ կենդանացայ, սիրելի.
Աստուած պահի քեզ անդադար ինձ համար։

Ինձ երանի՛, որ լսեցի քո գալդ.
Ուրախ կենօք միշտ անց կենայ քո կեալդ.
Կաքաւի պէս է երկշով ման գալդ
Քան զոսխակ է քաղցրաբառ խօսալդ.
Քան զԹութակ ես դու ճարտար ինձ համար։

Միշտ Արարիչն զքեզ պահէ անխաս,
ՅԱստուծոյ միշտ բարութիւն ստանաս.
Սուրբ Սարգիսն քեզ օգնէ ատենաշաս.
Գիւրջի-Նեվէի ցնծութիւնն ես՝ քանի կաս,
Տրտմութեանս ուրախարար ինձ համար։

Գիւրջի-Նովէ։

# Ն ր գ։

Կաժդէյ դէն՝ կաժդէյ չաս, դուշա մայեա, պօմնիւ վաս,
Ի՞նչ կուլի՝ ղադամ փոխես, լայեաղ անես՝ մօտս գաս,
Եադ օղլու համէամ օլայ՝ դեալ՝ արան մաննեան քեաս,
Սարի Խուդա, համշարի, սուխան միգույեամ ռաս։
Հէնի Ճիրի մէ, աք մօ, էխլա չէն սա՞դ միդխիար,
Ե՛ադինեան աշնա օլինջա՝ օլ մանըմ իչուն աղեար,
Վ. խալեօմ կրանէյ վինօ, բազինդրայեմ գիտար,
Էյ ղալում, եք շաբ բինեմ թու մարա մեհմանի դիգեար,
Ծըծերդ դէր բերանս, թէ չէ՝ ես կուլիմ անմաս։
Հաբ ու րուզ գիւլիշանդա լաւ էյլադըմ բիւլբիւլի,
Որ իմ կամքը կատարես, սամ տեսնեմ ի՞նչ կուլի,
Բեղամըլ էշխա դուշարըմ՝ դաղըլթարըմ դունեա փուլի,

Էլլա մէ մօկուդէ՝ ո՛րարիս չէնի սուլի,
Վէյ նի Բօղ, վէյ նի անդէլ, ըշտօ խատիտէ ատ նաս։
Ձուն բէլա բաղանուփսան, բուլուր՝ ղարաղջա երի,
Կրակի պէս չափաղդ դիփուն աշխարհքս կու էրի,
Կուդա պայդեօշ, պրաշու, միննեա սաաբօյ բերի,
Եք սահաթ սաբր բըքուն՝ բխանամ ղաղալի չէհրի,
Էրթի՝ օրի պուօշտի էլլա մինցի ամաս։
Խէյլի հարիֆ մարդ պիտի՝ որ խօսքերըս իմանայ,
Պադի սկուդա, սկաղալայ մընէ ադլին բազ անա,
Մօտի էրթի դարձանդի, գննացվալէ, չեմղթանայ,
Ղուրբանի թու, դարդիմանդ, բիա՝ միրիմ զամխանա,
Սախկին-Բուրջի էյլիր ինդի սանա ըլթիմաս։

Ս՚էահէն-Բուրջէ։

## Սորա հունէրուհն գոէ՛ր, ընթէրցո՛ղ։

Հրաշքներից հրաշք շա՛տ կ՚ասեն,
Ի՞նչ կայ, թէ քար անձին է։
Դ,ախ՝ Արարիչն Հայր երկնային,
Ինքն կենարար անձին է։
Ձախ տեղ տեղ Սաեղծեչն քանդեց,
Ըլնեց կենարար անձին է։
Ինն դաս հրեղէնքն են
Կարդին շարաշար անձին է։
Ակամջ դնէք, թէ քննէք,
Խխալներ կէսարար անձին է։
Թարայեանն Արարչին հետ
Դաշինք արարին խիստ աջադին.
Թէ Սաւան ժառանգ ծնանի,
Զէն ընծայի յիշատակին։
Ինչ դաշինքներ էր՝ կատարեց,

Տեղն էհաս՝ զենէ Սահակին·
Չի խնայեց Թուրայեանն,
Ձեռն հասցրեց դանակին։
Հրեշտակն ձայնեց· ահա՛ գառն
Ծառէն կախեալ՝ տէր անձին է։
Լեառն Սինայ գնաց՝ ետես
Այն ինչ արդա՛ր էր՝ անարատ·
Անեղին հետ ասեց՝ լսեց,
Իւ՛ր սիրելի խօսս հարազատ։
Աշխարհիս յանցանքն (անցքն) գրեց,
Հինգ գիրք չինեց, արար հաստատ։
Ինչ Ստեղծիչն հրաշագեղ
Գծագրեաց տասն խրատ,
Ետ 'ի ձեռն Բենատեսին,
Այն տախտակն քա՛ր անձին է։
Եթէ յանցանքդ քննես,
Ա՛հ կառնի քեզ, կ՚սասանես։
Ի՞նչ կ՚լինի սատանայն
Չար նետն սրտիցդ հանես·
Հրաշագանց Տէր ճանաչի՛ր,
Տեսած հրաշքդ զանց չի՛ անես·
Անգէտ Թուրինջ՝ թէ ասացի,
Անկատար կարծիք չի՛ տանես·
Տեսի Հրէի աչքն ինձն է,
Չի՛ քննեցի հատար անձին է։

Թուրինջ։

## Հանգոյն «Արէ՛, հոգի ջան, ինձի եա՛ղ մի՛ անիր» հանգուցեալ Աղէար Ադամայ երգոյն։

Արե՛, հոգիս, դու զիս անտես մի՛ առներ,
Լաւութեանցս փոխանակ վատ մի՛ առներ,
Վարդին կարօտ սոխակի հատ մի՛ առներ,
Սիրեմ, մեղք եմ, արի՛, օտար մի՛ առներ։

Դու իմ վարդն ես, իսկ ես սոխակ քո գերի,
Գիշեր՝ ցերեկ թափեմ զարտօսր անթերի,
Այս փըթթեա՛ց, զի սկսայց ծըլւըլալ,
Ուրախանալ, անուշ խօսել և խնդալ։

Զի՞նչ օգուտ քեզ՝ կարօտ սիրոյդ թէ մեռայց,
Զայս ցաւ յաշխարհ ես մեռելոց յիս տարայց,
Մինթէ կարծես՝ թէ անդ զքեզ մոռացայց,
Կամ թէ և անդ հրով սիրոյդ չ՚այրեցայց։

Վերջին շունչս է, անիրաւ, ինձ մի ճար,
Հերիք՝ խղճա՛, մի՛ տանջեր զիս չարաչար,
Թէ տանջելոց ես, լա՛ւ է՝ շուտ հոգիս հա՛ն,
Բայց նախ փափագ մի՝ զոր ունիմ, ՚կատար հա՛ն։

Թո՛ղ, աղաչեմ, ՚ի մէջ գրկացդ հոգիս տալ,
Զմայլիլ տեսլեամբդ, խոցս սրտիս դարմա՛ն տալ,
Դառն արտասուաց իմոց փոքր ինչ դադար տալ,
Մատաղ եմ քեզ ապա հոգիս յօժար տալ։

Բայց զայս փափագ իմ անկատար թէ թողցես,
Վասն այն՝ զի վաղ ՚ի սէր այլոց վառեալ ես,
Թէև մեռայց և՛ իմ ողջ դի փըտեսցէ,
Իմ լեզու կապ, իսկ իմ հոգադ փակ լիցէ։

Թէ սիրականդ ընդ իմ շիրիմ խեղճ անցցէ,
Երդնում՝ յայնժամ նաև փոշիս ձայն տացէ,
Քո մատաղդ՝ իմ անսուր մորթեալ, գոչեսցէ,
Եւ քարեայ սիրտդ ՚ի գութ՝ ՚ի լաց շարժեսցէ։

. . . .

## Ողջոյն հրաժարական։

1

Որբ լերինք, Վայոց Ձորոյ,
Ո՞ւր են ձեր ծաղիկներըն.
Դուք մերկացայք, վասն որոյ
Խոցուեց իմ աղիքներըն։

2

Ամենահրաշ սուրբ սենեակ,
Խորան Արկաղեան Խաչին,
Արեամբ զարդարեալ մանեակ
Դու յետին և առաջին։

3

Նորավանից պայծառ ուխտ,
Յիշատակ տանն Օրպէլեանց,
Որդիքդ եղեն պանդուխտ,
Փառքդ զէտ ստուեր էանց։

4

Ընտիր ուխտ Ցաղաց քարի,
Նշան Պռօշայ իշխանին,
Ընդէր դու այդքան տարի
Որբ Թողեր Հայաստանին։

5

Դիւափարատ Շաղին վանք,
Աշաջնորդաց մենաստան,
Կիսամեռին կ'տաս կեանք,
Թէ լինին քեզ պաշտաման։

6

Ստեփանոսեան Տապան,
Որ 'ի Մօզ խաղխաղեցաւ.
Քև գաւառն յաւիտեան
Վայոց Ձոր անուանեցաւ։

7

Ապառաժ լեռնից կախած,
Մարտիրոսեան ուխտատեղ,
Անմխաբան, մոռացուած,
Ո՛չ փառք ունիս, ո՛չ շքեղ։

8

Սքանչելիդ Գնդուանք,
Ընդ ոտիւք Կապուտ լերին,
Արփա գետն վազեվազ
Քավումէ քո ոտներին։

9

Քարկափոյ սիրուն տաճար,
Քարերդ սրբատաշ են.
Չկայ չէնք չէնքիդ յարմար,
Կոչվումես Սմբատաշէն։

10

Հեր-Հեր գիւղի սուրբ Սիոն,
Վանորէից Թանդ ակըն,
Դու քարոզչայ ամբիոն,
Քանդեց քեզ չար Վառամին։

11

Շատ տեսի ձեզ՝ լացայ,
Այս Գաւառապետ գոլով.
Ձեր հրաշքին հիացայ,
Տեսնելով յոլով յոլով։

12

Այժմ կամաւ Տէրութեան
Ես 'ի ձէնջ հեռանումեմ.
Գուցէ ցաւօք ծերութեան
Օտար տեղ մեռանումեմ։

13

Օրհասն մեր որ տանի,
Դուք էք իմ պահապանս.
Ձեզ նման օգնականի
Մատաղն է միշտ իմ կեանս։

14

Դուք էք հաւատոյ Թագն
Եւ փառք հաւատացելոց,
Դուք էք կենաց մուրհակն,
Եւ յոյս հիւանդացելոց։

15

Հայոց ազգի Ճրագն էք,
Թշնամեաց համար սուր տէգ.
Դուք նոցա վառ կրակն էք,
Ի ձէնջ լինին ահաբեկ։

16

Բաղդաւոր է Սէյեադն,
Ձեզ պէս հովանիք ունի.
Նորա ամէն դանդաղն,
Դու էլ լինի, կընդունի։

Սէյէադ։

---

## Խրատ։

Ա՜խ, իմ հոգի, այլոց գերու մի՛ լինիլ,
Անազդու և անապաշու մի՛ լինիլ.
Քեզ չեմ ասում ամենալու մի՛ լինիլ,
Ամենեւին լեզուի պարսաւ մի՛ լինիլ,
Անշունչ պատկեր, դատարկ հալաւ մի՛ լինիլ։

Մարդուս յատուկ փափագն, ցանկութիւնն
Նախ և յառաջ է հոգւոյ փրկութիւնն.
Երկրորդ՝ իւրեան յաշխարհի կեցութիւնն.
Թէ ազնիւ իսկ է սիրելոյդ արիւնն,
Սպիտակի ներհակն սեաւ մի՛ լինիլ։

Գիտեմ՝ գիտեմ, չեմ անտեղեակ, սիրելի,
Ունիս համբաւ, ունիս հասակ, սիրելի.
Քոյ զինուորեալ սէրդ նիզակ, սիրելի,
Կամաց փափագ, կենաց ներհակ, սիրելի,
Բայց դու անմեղ արեան ծարաւ մի՛ լինիլ։

Քոյ տէրոջդ պէտք է հաւատէր լինիս,
Նորա բոլոր ցաւերին ընկեր լինիս,

Աշխատեա՛ լաւ վարուց՝ բարուց տէր լինիս,
Խարխուլ անշարժ, արմատ բարեբեր լինիս,
Զարին նախանձող դու բնաւ մի՛ լինիլ։
Արդ քոյ սէրդ ո՞վ է ինձմէն անջատող,
Եթէ լինիս դու բանսարկուին չ՚նկատող,
Ո՛չ գրաւուող, ո՛չ իսկապէս հաւատող,
Շիրին անուամբ խրատուէդ գանդատող՝
Երդնում արևդ քո՝ խրաւ մի՛ լինիլ։

18 10/6 56. 'ի Վաղարշապատ։ Մ. ՇՐԳ Շահէն։

## Մօտ սէրաչանն։

1

Մ՛ի անողորմ եար,
Քաշի՛, մօտդ տար·
Քեզնից առաւել
Զանիմ սիրաչար։

2

Տեսակով դեանջ ես,
Սիրոյ նաչանջ ես·
Ինձ բա՛ւ է տանջես
Սիրովդ չարաչար։

3

Ինձ արա՛ խնամ,
Քեզ ուրախանամ·
Մինչև ե՞րբ մնամ
Էս անմխիթար։

4

Լո՛ւր պաղատանքս,
Ասեմ անցանքս·
Լուսաւոր կեանքս
Մ՚ի անիլ խաւար։

5

Ողորմեա՛ Թերի,
Կարօտ եմ սէրի·
Դառել եմ դերի
Քեզ միշտ՝ անդադար։

6

Մեռայ հաւասու,
Ի սէրն Աստուծոյ
Գիւրջի Նաւասու
Ցաւին մի հնար։

Գիւրջի-Նաւաէ։

## Նոր սիրաջանին։

Ասա՛, հոգիս, ըն՞չ առ քեզ մեղանչեցի,
Արիւն չ'արի՝ մէկ սէրդ թախանձեցի։
Ես քո սիրոյդ կարօտ եմ, քո սիրածն եմ,
Ես քո ցաւդ առնողն եմ, քո մեռածն եմ,
Ես քո գլխիդ մատաղն եմ, քո զոհածն եմ,
Ես քո զանգուր զաւիցդ հոգւով կախուածն եմ.
Արի՛, ման տամ գլխովդ
Յարաժամ, փարվանի պէս,
Երեսս փէյանդազ տամ,
Դու կոխչորի՛ր՝ Խանի պէս.
Տե՛ս իմ հալս, խնամք տա՛ր,
Էդքան անգութ մի՛ լինիր։
Նոր լուսնաձև ունքերդ խիստ կապել ես,
Ողորմութեան դուռն յիմ վերայ փակել ես,
Խումար աչօքդ սիրտս ու հոգիս մաշել ես,
Նետ ես չինել թերթևանքդ՝ քաշել ես.
Թէ կամենաս սպանիլ,
Մաջալ տո՛ւր, թէզ մի՛ անիլ.
Մի հոգի է՝ քեզ ղուրբան,
Բայց բի մուրադ մի՛ թողնիլ,
Տո՛ւր ինձ քո անգին սէրդ,
Հատ բի մուրուվաթ մի՛ լինիր։
Արփիափայլ ծագել ես առաւօտուց,
Իմ վերայ էր քո ցօղդ նախ՝ առաջուց,
Առանց իմ քեզ խաւար էր օրն 'ի վաղուց,
Լուսինն անգամ ո՛չ տայր քեզ լոյս 'ի հոգուց.
Ինչո՞ւ հիմի մոռացար,
Այդպէս չուտով ուրացար
Իմ ու քո սուրբ պայմանը,
Որով կապեալ՝ հեռացար

Դու ինձանից, սիրական,
Կամաչես, եադ մի՛ լինիր։
Սիրոյդ կրակումն խորովեցիր զիս,
Ի զուր տեղն որքա՞ն չարչարեցիր զիս,
Սուտն սիրով՝ խօսքերով դաղեցիր զիս,
Համարեա՛, թէ կենդանույն թաղեցիր զիս․
Ալա՛․ ո՞վ է սաբաբը,
Քո մտքումդ իմ բաբը․
Ո՞ւմ ես տուել դու սիրտդ,
Հոգի, որ տաս իմ թարկը․
Արժան չէ՛ այս քո պատուիդ,
Ամօթ է շատ, մի՛ լինիր։
Հոգւոյդ մեռնեմ, ա՛ռ օրինակ վարդիցը,
Տե՛ս սոխակն ի՞նչ է քաշում էս դարդիցը,
Երբ տեսնումէ խաբը մօտ իւր վարդիցը,
Կա՛մ մեռնումէ, կա՛մ կտրումէ սրտիցը
Մոհբաթն ու էշխն ու սէրը,
Փշրվումէ թևերը․
Ո՛չ մեռած է, ո՛չ կենդան,
Տանումէ սև օրերը,
Ես քո բլուլբուլ, դու իմ վարդ,
Խեղճ եմ, բադդ մի՛ լինիր։
Քեզ, նազելի, սիրահար եմ՝ սիրահար,
Սիրոյդ բոցումն վառվումեմ անդադար,
Ես էրվեցի, դու, անողորմ, բեխաբար,
Փութա՛ առ իս,, հա՛ս յօգնութիւն, արա՛ ճար,
Եթէ ո՛չ, կու փոշմանես,
Թէ զիս կարօտ կու սպանես
Քո տեսոյդ, քաղցր սիրոյդ,
Ա՜խ կու քաշես, վա՜յ կանես,
Յայնժամ ոչինչ չե՛ս շահիլ․
Խնայեա՛, վատ մի՛ լինիր։

Հիմշադ բօյիդ ես եմ հէյրան անդադարար,
Ո՛չ քուն ունիմ, ո՛չ հանգիստ, ո՛չ Թէ ղարար,
Դու գնացիր, անաստուած, սիրտս էլ տարար,
Ռահմ արա՛, աստ՛. ո՞վ ինձ քեզ մադեար
Կարայ մէկ հովուԹիւն տալ,
Կամ սրտիս զովուԹիւն տալ,
Սա՛ղ աշխարհիցս աւելի
Թանգագին ես ինձ համար,
Արի՛ - Թէկուզ հոգիս առ,
Բայց միայն զատ մի՛ լինիր։
Ափսոս արի՛, բե՛ր ՚ի միտ անցեալ սէրդ,
Միտք արա՛, տե՛ս, քանի՞ տարայ դարդերդ,
Քեզ չի՛ վայել, մի՛ կորիր էհԹիբարդ,
Ձի դառն է ինձ մահից մի վատ խաբարդ,
Արի՛, համով նա՛զ արա՛,
ՍուլԹանիդ համազ արա՛,
Դի՛ր սիրտդ սրտիս վերայ,
Թառլանի փարվազ արա՛.
Ես ղաբալով ղուլ դառնամ,
Դու առ, ժլատ մի՛ լինիր։

Սուլթան։

## Հանելուկ։

Պատմութեանս առարկայից մէկն Մէն տառն է, միւսն՝ Նուն,
Այնչափ սիրահար են միմեանց՝ որչափ սիրէ մուկն զկատուն.
Մէնին կամքն նա է, որ այս աշխարհիս մէջ Նուն տառ չի՛ լինի,
Որ ամէն տեղ իրան գովէն, Նունին համար մէկ բառ չի՛ լինի.
Սրանց երկուսի կամքն է՝ Հօյ տառի բերնին դնել սանձ,
Յետոյ գրպանը դարդակել՝ իրանց համար չինել մեծ գանձ.

Թէ Հայն գրպանին նեղուճ տայ, կու գտնի շատ Մէներ՝ Յոյներ,
Սոքա յափշտակել կամին, և ո՛չ թէ կամաւոր նուէր.
Հայն գլխին երկար միջոց փորձութեան քարեր է կրպել,
Վասն որոյ ո՛չ Մէնն՝ ո՛չ Յոյնն չեն կարենալ նրան խաբել.
Մինչ նրանց շահը չի՛ տեսնի՝ Հայն խուր քսակը չի՛ բանալ,
Խոստմանց չի՛ հաւատալ, յետոյ խաբուիլ՝ յիմարանալ.
Քանզի Հայէն, որանց նման, Կինն ու Այքն էլ խոստացան,
Խոստումնքը չի՛ կատարուեց, բայց բաւական փող ստացան.
Բարեգո՛րծ Հայ, ինչ լաւութ ունիս՝ ցոյց տո՛ւր դու քո Քէյէն,
Կու փոշմանիս, թէ չի՛ լսես քո խոնարհ՝ հարազատ Սէյէն:

Սէյէաք:

## Առ Պ. Ռոժէշկն Սիմէօն Յովհաննէսեան:

Արթնացի՛ր, իմ ազնուական, արթնացի՛ր,
Պարոն բժիշկ իմ անման, արթնացի՛ր.
Ահա՛ կաքաւ, սազ ու քեման, արթնացի՛ր,
Պաշտելի ժամ երեկոյեան, արթնացի՛ր:

Արթնացի՛ր, որ մեր ցնծութիւնն դու ես,
Աղայ Մկրտչիս խնդութիւնն դու ես,
Մինչ համայնից պայծառութիւնն դու ես,
Ողջ տխրութեանց դեղ ու դարման, արթնացի՛ր:

Մայիսն է այս, բլբուլն վարդին մօտ է,
Կ'արժանանայ՝ ա՛լ ինչ սիրոյ կարօտ է.
Ազնիւ հո՛ւն ղամէն ցաւքը փարատէ,
Սիմէօն Յովհաննէսեան, հոգի ջան, արթնացի՛ր:

Օր ցնծութեան, ահա՛ ժամ և ժամանակ,
Ի տես վարդին արթնացի՛ր, ազնիւ սոխակ,
Շիրինէս է արթնութեանդ աղաղակ,

Կաքաւն ունի ամենազնիւ եղանակ,
Արթնացի՛ր փութով, գովական, արթնացի՛ր։

—

## Տեսեալ զի թռչունն ոչ ընտելացաւ նա այսու 'ի խորին տնոյ, նուագեաց 'ի նորա։

Չեմ գիտում՝ ի՞նչ է միտքդ, Սիմէօն Իվանի՛չ՝ սիրելի,
Որ մեր խօսքն լսելու չես արթնանում քի՛չ՝ սիրելի.
Բժշկի ձայնն մինչև է յատուկ փրկի՛չ՝ սիրելի,
Չէ՞ որ մեք՝ բազմականքս՝ եմք քեզ աղաղակի՛չ՝ սիրելի։
Արթնացի՛ր, իմ աչքի լոյս, խօմ այսքան քնել չի՛ լինիլ,
Այս տեսակ զարգխմանգներ հեշտ գնով գնել չի՛ լինիլ,
Ախ, աշուղի ձեռքիցն դիւրաւ պրծնել չի՛ լինիլ,
Անունիդ հոլովմանն ղառայ մի Չամի՛չ, սիրելի։
Գիտեմ, որ Աստուած շատ Վրաստանին քուն չի՛ տուաւ,
Բայց ուրախութենէն՝ երբէք տրտմութիւն չի՛ տուաւ,
Ոչ ոք՝ ինձի լսելոյ՝ քեզ էսչափ նեղութիւն չի՛ տուաւ,
Մինչ կաքաւն էլ քնելոյդ, տես, ներողութիւն չի՛ տուաւ,
Նստի՛ր ու ծափ սկսի՛ր, ահա՛ քեզ երգի՛չ, սիրելի։
Մի՛ վախենար, քեզանից դեռ դեղ ու ճար չեմ ուզում,
Աչքից ու աչքացաւից պրծած եմ, խալաւ չեմ ուզում,
Բայց խօսքս լսելոյ աւելի էհթիբար չեմ ուզում,
Նստի՛ր ու ինձ բարովէ՛, խօմ քեզնից քնար չեմ ուզում,
Քոյ քնոյ շրջաններին - Շիրինն պատմի՛չ, սիրելի։

—

## Օտարնացեալ 'ի տնոյ ողջոյն տայ Շերենին Թծաւորող, և ասէ ըսէտագայ երգս, որ 'ի վերայ մահ որդւոյ եւրոյ Մնտայէլի։

Հարազատ ծնողաց զաւակ Թանգագին,
Ջօացի՛ր Երուանդեան Տիգրանին նման,

Աշխե վարդ՝ բաց եղած, նաման Թանգաղին,
Աչքիս Ամատունեան Վաչանին նման։
Անմեղ ապրելով քոյ մանկութիւնդ.
Հրաշալի, դեռահաս գեղեցկութիւնդ
Միքայէլ Բժշկեան փոքրիկ անունդ,
Բայց ապրիս հայկազուն Վարդանին նման։
Անցաւոր աշխարհիս սէրն է զուարկան,
Իւր ուրիշ ունելիք չի՛ք սիրոյ նման,
Խօսքս քեզ համար էր, փոքրիկ Միքայէլ ջան,
Ջօրացի՛ր՝ Շիրինիս հրամանին նման։

18 20/5 56. 'ի Վաղարշապատ։ Ո. ՇՐԳ Ս ԵՐԵՆ։

## Ո. ՂԵՐ։

Միանգամայն ինձ սպանի՛, մի՛ Թողուր անտէր, սիրելի.
Ուրախութիւն կենացս, որք գլխոյս տէր, սիրելի.
Անձն իմ հանգիստ չէ կրում ո՛չ տիւ՝ ո՛չ գիշեր, սիրելի,
Մի՛ Թողուր քեզնէ կարօտ, ողորմասիրտ լե՛ր, սիրելի.
Այս ցաւն է անտանելի, ո՞նց անեմ համբեր, սիրելի։
Վա՛յ է ինձ, առանց քեզ աչքս ճանապարհի մնամ.
Կ՚լինիմ սիրոյ գերի, ի՞նչպէս գործիս արի մնամ.
Սիրածս ձեռք չ՚անկանիլ, Թէկուզ հազար տարի մնամ.
Ինձ համար մահն լաւ է, քան Թէ 'մէջ աշխարհի մնամ.
Վա՜յ իմ անբաղդ կենացս, վերջն ա՞ս տուիր խեյր, սիրելի։
Ուրախութեան օրերս միշտ պէտք է լինի լաց եղած,
Լուսաշաւիղ աչքերս արիւնախառն Թաց եղած.
Անդադար տիւ և գիշեր դռներս պահեմ բաց եղած,
Քանի դերիք ճամբումդ կանգնեցնեմ խմաց եղած,
Դուցէ լինի քեզանից մէկ աւետաբեր, սիրելի։
Այսուհետև, սիրելի, մխիԹարանքս ո՞վ կ՚լինի.
Ողջ լիառատ աշխարհն ինձ համար սով կ՚լինի.

Քո սիրոյդ արտասուելով՝ արտասուքս ծով կ՚լինի,
Կ՚մնամ կսկծալը, ո՛վ ինձի ապահով կ՚լինի.
Վերջապէս աղաչումեմ, տո՛ւր ինձ մի պատուէր՝ սիրելի։
Աղաչումեմ, սիրելի, աշխատանքս զուր մի՛ թողուր
Ուրախացո՛ օրերս, կարող ես՝ տխուր մի՛ թողուր.
՚Քո սիրոյդ երված սիրտս՝ բոցավառեալ հուր մի՛ թողուր,
Լուացեալ կաթամբ չըթմունքս՝ ցամաք աղբիւր մի՛ թողուր.
Մեր միջի կապակցութեան պայմանն այդպէս չէր, սիրելի։
Գնումես՝ շուտով դարձիր, դու, քո Ստեղծողը սիրես.
Գեղարդն քեզ պահապան, Քրիստոսի կողը սիրես.
Ամէնքս եւ պէտք է գնանք, գերեզմանիդ հողը սիրես,
Վերջապէս դատաստանի Գաբրիէլեան փողը սիրես,
Քաշել տո՛ւր օրինակդ, տո՛ւր պահեմ պատկեր, սիրելի։
Հոգի ջան, առանց քեզ այսուհետեւ վա՜յ իմ ջանին·
Ողբումեմ, աղերսումեմ, ողորմե՛մ ինձպէս ջիւանին.
Այդպէս զրկանք չի՛ անիլ սիրականն սիրականին.
Գիւրջի Նուէն եախիցդ ձեռ չի՛ քաշիլ դատաստանին,
Կամաչես՝ քեզ կ՚նայեն, տե՛ս քանի՜ ազգեր, սիրելի։

Գիւրջի-Նուէ։

## Թիթեռն։

Մայիսեան քաղցր՝ լաւ եղանակին
Մի օր ճեմելով՝ մտի ՚ի պարտեզ.
Ծագման արեւու նշոյլի տակին
Ցնծային զալարք, զուարճանայր սեզ.
Ծաղկունք երփներանգ՝ բացեալ գոյնզգոյն
Գեղով, զարդարէին պարտէզն ողջոյն։
Սոխակն կոչէր զիւրն սիրահար
Զթագուհին ծաղկանց զվարդն սիրուն.
Թռչնակք ձայնակից եղեալ հաւասար,
Մեղմ առաջիկն զերգս առաւօտուն.

Յոյժ զուարճալի էր այն տեսարան,
Արտաւուչ՝ ախորժ այն նուագարան:
Տեսի զԹիԹեռն նախշուն՝ լայնաԹև,
Ի վերայ ծաղկանց Թուռեալ պարէր,
ՄերԹ հողմն վանէր զկենդանին ԹեԹև,
Նա անդրէն դառնայր՝ զնոքօք փարէր·
Երբեմն Թուեալ՝ փոքր վերանայր,
Բայց խոյառ 'ի ծաղկանց նա ոչ հեռանայր:
Ահա մեզ ազնիւ՝ բարի օրինակ,
Որ ամենայն ոք 'ի մէջ աշխարհիս,
Թէ ցանկայ բարւոյ, ամէն ժամանակ՝
Որպէս զԹիԹեռն՝ գտանէ բարիս·
Բայց աւա՜ղ բազմիցս մարդոյ զայն մերժէ,
Իսկ ներհակն բարւոյն նմա ախորժէ:
Երբ 'ի գիշերի նստելով 'ի տան,
Ճրագ մի եդեալ՝ զայս մտածէի,
Ի մէջ պարտիզի բացեալ պատուհան,
Զեփիւռն քաղցրիկ ախորժ ծըծէր·
Եկեալ այն ԹիԹեռն ճրագու փարէր,
Մինչև ընկղմեալ 'ի բոցն վառէր:
Զայս կրկին տեսեալ, խոկայն յիշեցի
Բան առաքելոյն սրբոյն Պօղոսի·
Առ այս միտ մեկնեալ զնա քարշեցի,
Զոր միում տեղւոջ նա այսպէս ասի·
Որ մերձենայ 'ի պոռնիկ, մարմին մի է·
Իսկ որ մերձենայ յԱստուած, մի հոգի է:
Այսպէս և մարդս, սիրող լուսատուն,
Փափագմամբ դիմէ լուսաւորութեան·
Հետևմամբ ուսման լինի իմաստուն,
Որով հասանի կատարելութեան·
Դեռ նոյն շաւղի ժամանէ վախճան,
Նա ոչ մեռանի, այլ կեայ յաւիտեան:

## Տրտունջ:

Չէիր իսկ նաւավար, այլ անբան տաւար,
Քեզ միշտ հարկաւոր էր հմուտ ղեկավար,
Դու ո՛չ հողմից տեղեակ էիր՝ ո՛չ կողմից,
Ի զուր դու զնաւդ կործանման տուար:

Ծովերի միջին քո ծովըդ էր հանդարտ.
Նաւերին քո նաւըդ էր շքեղ և զարդ,
Բայց դու արբեցեալ մոլութեան գինով,
Զվիճակ խեղճ նաւիդ ձգար 'ի Թակարդ:

Թէ խելօք նաւավար չունենայ նաւըն,
Շուտով կ'տարածուի անշահ համբաւըն,
Այն, ո՛վ ինքն իրան 'ի կորուստ կուտայ,
Որ դու քեզ տուր քո յիմար կամաւըն:

Այլազանց նաւերն մնացին անփորձ,
Բայց քո նաւըդ եղև քայքայեալ՝ անգործ,
Այժմ ոք գիտէ, զի մարդն աստանդական
Կենաց մէջ չի՛ տեսնալ իւր վերայ լու ձորձ:

Վա՜յ քեզ խեղճ Հայաստան, նաւ անկառավար,
Բաղդն միշտ տուաւ քեզ օտարաց յաւար,
Երբ էանց շառաւիղ տան Լուսաւորչեան,
Մերկացար 'ի լուսոյ՝ մնացիր խաւար:

Որդիք քո խորթացեալք և ո՛չ հարազատք,
Այժմ կերպ չարութեանց ծառայք անազատք,
Ընդ առաքինութեանց երբէք չեն ծանօթ
Ո՛չ ռամիկք, ո՛չ իշխանք և ո՛չ պայազատք:

Զգեն զմիմեանս 'ի Թշուառ վիճակ,
Յորդայթ մահու և դատաստանի տակ.
Ի կորուստ միմեանց սուտ վկայելով,
Առաջի այլազգեաց լինին խայտառակ:

Ճաշակը չեն առած երբէք բարութեան,
Անդադար սրանեն զնիւթ չարութեան.

Մինչև չի՛ հեռանան բնութեան ցաւերից,
Պիտի մնան անշուշտ 'ի վատթարութեան։
Հայ չ'կայ՝ որ իրան կորստին վայ տայ,
Իւր աշխատակցին Ճշմարիտ փայ տայ,
Եթէ որ մէկ Հայում լաւ վիճակ տեսնի,
Սգալով կու տրտմի՝ ո՛չ թէ կու խայտայ։
Արդեօք, ո՞վ տուաւ մեզ վայս վատ բնութիւն,
Փոխանակ հեզութեան չար յանդգնութիւն,
Ես ո՞նց հաւատամ՝ թէ Հայք ունեցել են
Ընտիր ընտիր գործեր, կամ դիւցազնութիւն։
Զկայէն սիրեն միշտ, ո՛չ թէ զԱբէլն·
Զոչխարն ատեն և պատուեն զգէլն,
Այս է պատճառն՝ որ գլուխ պատճառն
Բարկութեամբ խզելայ մեր բաղդի թելն։
Զամէք՝ սուտ է սա, կամ անտեղի տնազ,
Իմ խօսքերիս միջին սուտն է յոյժ նուազ,
Սէյեա՛դ, տա՛. մի՛թէ ունիս ցանկութիւն
Գանգատել ազգիցըդ միշտ և հանապազ։

Սէյեաթ։

## Ն.— Պ. Մկրտիչին Խրիմեան Սանահեանց։

Աղայ Մկրտիչ, հիմա զձեր փառաց գովութիւնն
Կարո՞ղ է ամբողջ պատմել իմ խօսքիս զօրութիւնն.
Սաղ Երևանն է գիտում ձեր քաջութեան անունն,
Ձեր բարի համբաւներն, ձեռաց առատութիւնն,
Ամէնիցն յառաջադէմ.. ձեր դարդիմանդութիւնն։
Աստուածապարգև հարուստ՝ ամէն կերպիւ լինելն,
Եւ և արդ հանճարեղ՝ կառավարութեամբ շնորհալի,
Հասարակաց պաշտպանող՝ իշխանաց մէջ պատուելի,
Վերջապէս ձեզ արժանի՛ է - ձեր ամէն կեցութիւնն։

Ժլատութենէն անմաս, յոյդ ու սիրտդ առատ,
Քանի՛ գործոց ձեռնտու, բայց ո՛չ մէկէն յուսաշատ.
Քո կատարելութեանդ ո՛վ արդեօք կրկնէ խրատ,
Դարդիմանդին չի՛ պակաս ո՛չ երբեք յաջողութիւնն։
Բաղդդ ու աստիճանդ օր ըստ օրէ զօրանայ,
Նշանծիցն աւելի՛ շուք գտնելով բազմանայ,
Քո բաղդդ զաւակներով՝ քեզանով ամբողջ մնայ,
Հայաստանն քեզ նման հայկազունք շատ ունենայ,
Ի՛նչ և իցէ - այսքան էր Շիրինիս ատութիւնն։

18 $\frac{20}{5}$ 56. ՚ի Վաղարշապատ։ Ա. ՊԱՏ. ՇԷՐԷՆ։

## ԱՂՋԻԿ։

Աղջիկ, այդ ի՛նչ բան ես դառել,
Ծաղկեալ բուրաստան ես դառել.
Արշալուսին դուրս ես գալիս,
Աստղ առաւօտեան ես դառել։
Լոյս ես արեգակի նման,
Վառեալ աշտանակի նման,
Ձայնումեմ սոխակի նման,
Մի՞թէ վարդարա՞ն ես դառել։
Ի՞նչ եմ արել, ինձ ատումես,
Խիստ դառնութեամբ նախատումես.
Լեզուաւ սիրտս կտրատումես,
Ինձ հետ օտար ես դառել։
Ո՛չ փող ունիմ՝ թէ գրաւեմ,
Սերիդ գրանն ծարաւ եմ.
Ո՛վ սիրելի, ո՞նց չի՛ ցաւեմ,
Իսկի Ճրագարան ես դառել։
Մի՛շտ կանաչ ես՝ որպէս կենի,
Ծաղկօք լի՛, ինչպէս նունենի.

Նորան տեսնեմ՝ շահ չի՛ տենի,
Ում հետ սիրական ես դառել:
Քեզ ափսոսի՛ր, ինձ տու՛ր աւաղ,
Սիրտս արիր արնում շաղախ.
Այլոց համար ծափ ու ծիծաղ,
Ինձ օրհասս մահուան ես դառել:
Իմ նեղութիւնս չես տեսանում,
Քամույ նման անց ես կենում.
Մէկ ժամ մօտս չես մնում,
Քան զաւուր աշնան ես դառել:
Արի՛, ինձ այդպէս մի՛ անիլ,
Ինձ չարաչար մի՛ սպանիլ,
Այդ քրիստոնեի չի՛ պատկանիլ,
Մահմետադաւան ես դառել:
Այսքան վիշտն ինձ արժա՞ն ա,
Մարդս պէտք է ցաւ խմանայ.
Գիւրջի Նաւէն ո՞նց մոռանայ,
Խօսելույ բերան ես դառել:

Գիւրջի-Նաւէ:

024



Ի ԹԻՒՍ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՃԵՄԱՐԱՆԻՍ, ՈՐՈՑ ԱՒԱՐՏԵԱԼ ԸՆ-ԹԱՑՍ ՈՒՍՄԱՆՑ ՊԱՏՐԱՍՏԵԱԼ ՅԱՅՍՄ 1859 ԱՄ Մէկեալք ԵԼԵԱԼ ԴԵՊՐՈՑԷՆ ՄԵՐ, ՅԱՒԵԼԵԱԼ Ի ՅԵՏԱԳԱՅ ՏԵԱՌՆ —

Գեղամեանց՝ Տ. Աբրահամ Յովհաննիսեան, Ազնուական, յԵրեւան։

Մելիքեանց՝ Տ. Եզնակ Աւաքելեան, յԵրեւան։

Միրաքեանց՝ Տ. Յովհաննէս Եսայեան, Պրօկուրօր Լուսաւորչական Սինոդոսին Սրբոյ Էջմիածնի, Սատտօկի Սովետնիկ, 'ի Վաղարշապատ։

Ռօստոմեանց՝ Տ. Դաւիթ Յարութիւնեան, Կօլլէժսկի Սովետնիկ և Ասպետ, 'ի Շամախի։

Տէր-Մարուքեանց՝ Տ. Յովհաննէս Անդրէասեան, Կօլլէժսկի Ասէսօր և Ասպետ, յԵրեւան։

Տիգրանեանց՝ Տ. Մկրտիչ Յովհաննիսեան, Վաճառական, յԵրեւան։

Библиотека ... им. А. Мясникяна

# Մ Ա Տ Ե Ն Ա Ն Ք

## Տպեալք 'ի Մոսկուա

աշխատասիրութեամբ Ոսկանայ Տէր-Գէորգեան Յովհաննիսեանց Երեւանեցւոյ:

Գին իւրաքանչիւր օրինակի՝ արծաթադրամ

1. Նոր Քնար Հայաստանի՝

Տետրակք

| | | Բուբ. | Կոպ. |
|---|---|---|---|
| Ա. (Աշխար Ատամի Երգեր) | 1855, | — | 10 |
| Բ. (Աշըգ Ջէրէնի Երգեր) | 1856, | — | 15 |
| Գ. (Նէրանու Երգեր) | 1856, | — | 10 |
| Դ. Երգասիրութեան | 1858, | — | 30 |
| Ե. Ազգայէն Երգեաց | 1859, | — | 20 |
| Ա. Մէյէտաքէ Երգեր | 1857, | — | 25 |
| Բ. Մէյէտաքէ Երգեր | 1859, | — | 35 |
| 2. Սմբատ Պատմագիր | 1856, | — | 50 |
| 3. Պատմութիւն Օրպելեանց | 1858, | — | 15 |
| 4. Կիրակոս Պատմագիր | 1858, | 1 | — |
| 5. Ուսուցիչ Պարսկական Լեզուի (Учебникъ Персидскаго Языка) | 1856, | 1 | — |

---

Ցանկացողքն այսց գրեանց՝ կարեն ստանալ 'ի վերոյիշեալ աշխատասիրողէն, որ Ուսուցչական և Վերատեսչական պաշտօնիւք ծառայէ 'ի Ճեմարանի Արեւելեան Լեզուաց Տեարց Լազարեանց, որ 'ի Մոսկուա: